# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

33ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 3 (1603) ՇԱԲԱԹ, ՓԵՏՐՈՒԱՐ 2, 2013
VOLUME 33, NO. 3 (1603) SATURDAY, FEBRUARY 2, 2013

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՐԵՔ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆ

Հայաստանի Նախագահի թեկնածուներ՝ Հրանդ Բագրատեան, Պարոյր Հայրիկեան եւ Րաֆֆի Յովհաննիսեան հանդէս եկան յայտարարութեամբ, ներկայացնելով իրենց մտահոգութիւնները ընտրութիւններու կապակցութեամբ:

Յայտարարութեան մէջ մասնաւորապէս ըսուած է. «Հայոց Ազգային Բանակի օրուայ առթիւ շնորհաւորելով Հայաստանի բոլոր քաղաքացիներին՝ մենք մեր պարտքն ենք համարում ներկայացնել մեր միասնական մտահոգութիւնները:

«Մենք գտնում ենք պատմական կարեւորագոյն իրադարձութեան՝ փետրուարի 18-ին կայանալիք Հայաստանում Նախագահական ընտրութիւնների շեմին:

«Ցաւօք, մեզ առայժմ չի յաջողուել ստեղծել այն Հայաստանը, որտեղ գերակայում են օրէնքի իշխանութիւնը, համամարդկային ժողովրդավարական չափորոշիչները եւ ազգային արժէքները: Հայաստանում ընտրութիւնների միջոցով ժողովրդի իշխանութիւն ձեւաւորելը մեր հասարակութեան համար այդպէս էլ մնաց բաղձալի երազանք: Այս արատաւոր իրավիճակը մեզ թելադրում է հանդէս գալ մի շարք նախաձեռնութիւններով, մասնաւորապէս՝

«Մենք գտնում ենք, որ անհրաժեշտ է հրապարակել հանրապետութիւնից բացակայող քաղաքացիների ցուցակները, ովքեր, ի խախտումն ՀՀ Սահմանադրութեան, զրկուած են ընտրելու իրենց իրաւունքի իրացման հնարաւորութիւնից: Մենք գտնում ենք, որ վերջին մէկ տարում աւելի քան 180 օր երկրից բացակայած, բայց ընտրացուցակներում ընդգրկուած ՀՀ քաղաքացիների ցանկը ընտրատեղամասերում պէտք է կախուած լինի հիմնական ցուցակներից առանձին՝ նպատակ ունենալով բացառել երկրից բացակայող քաղաքացիների փոխարէն քուէարկելու դէպքերը:

«Բոլոր թեկնածուները՝ ներառեալ գործող Նախագահը, պէտք է պարտաւորութիւն ստանձնեն (եւ ոչ թէ խօսքով, այլ գործնականում իրագործեն) բացառել իրենց վարչական ռեսուրսի օգտագործումը, այդ թւում՝ բիւջետային ոլորտի աշխատակիցների՝ ուսուցիչների, բժիշկների, զինծառայողների նկատմամբ վարչական ճնշումը, ոստիկանների, անվտանգութեան ուժերի, բանակի օգտագործումը ընտրական գործընթացներում: Պէտք է բացառել որեւէ եղանակով վախի մթնոլորտ ստեղծելու եւ մանաւանդ պետական համակարգում աշխատանքի ընդգրկուած քաղաքացիների ահաբեկելու արատաւոր գործելակերպը»,- մասնաւորապէս ըսած են Հրանդ Բագրատեան, Պարոյր Հայրիկեան եւ Րաֆֆի Յովհաննիսեան:

## ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ ԸՆՏՐՈՒԵՑԱՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ 97-ՐԴ ՊԱՏՐԻԱՐՔ

Սրբոց Յակոբեանց Ուխտի Միաբանական Ընդհանուր Ժողովը Յունուար 24-ին Երուսաղէմի պատրիարք ընտրեց Նուրհան Արք. Մանուկեանը:

Միաբանութեան անդամ 33 հոգեւորականներ՝ Երուսաղէմէն եւ արտասահմանէն, եկած էին ընտրելու երջանկայիշատակ Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի արժանաւոր յաջորդը:



Երուսաղէմի Նորընտիր պատրիարք Նուրհան Արք. Մանուկեան

Յունուար 23-ին Միաբանական Ընդհանուր Ժողովը պատրաստեց Պատրիարքական Ընտրութեան Թեկնածուներու հնգանուն ցանկը: Թեկնածուներն էին Պատրիարքական Տեղապահ՝ Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեան, Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Նուրհան Արք. Մանուկեան, Տաթեւ Արք. Ղարիպեան, Սեւան Արք. Ղարիպեան եւ Գիսակ Արք. Մուրատեան:

Յունուար 24-ին Գաղտնի քուէարկութեամբ կատարուեցաւ Պատրիարքական Թեկնածուի ընտրութիւնը: Քուէներու բացարձակ մեծամասնութեամբ՝ ընտրուեցաւ Գերշ. Տ. Նուրհան Արք. Մանուկեան, որպէս 97-րդ Պատրիարք:

Ընտրութենէն անմիջապէս ետք, Նորընտիր Պատրիարքը իր շնորհակալական խօսքը ըրաւ միաբան հայրերուն, որմէ յետոյ երգուեցաւ «Սիոն»-ի Օրհներգը: Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի զանգակները ղօղանջեցին ընտրութեան լուրը: Միաբան հայրեր շնորհաւորեցին Նորընտիր Պատրիարքը ու թափօր կազմելով առաջնորդուեցան դէպի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար:

Նորընտիր Պատրիարք Նուրհան Արք. Մանուկեան ծնած է Հալէպ, Սուրիա, 1948-ին: Ձեռնադրուած է աբեղայ 1971-ին:

Ընտրուած է Լուսարարապետ 1988-ին, եւ 1999-ին Եպիսկոպոսական Ձեռնադրութիւն ստացած է ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետէն:

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹԻՒՆԸ ԱՒԵԼԻ ԼԱՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ Կ'ԱԿՆԿԱԼԷ

Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Ճոն Հեֆերնի համաձայն, միջազգային հանրութիւնը կ'ակնկալէ, որ հայաստանեան գալիք նախագահական ընտրութիւնները աւելի լաւ ըլլան, քան անցեալ Մայիսին կայացած խորհրդարանական ընտրութիւնները:



Միացեալ Նահանգներու դեսպան Ճոն Հեֆերն

ԱՄՆ-ի դեսպանատան մէջ Յունուար 30-ին հանդիպելով լրագրողներու հետ Հեֆերն նաեւ ըսած է, թէ յոյս ունի, որ Փետրուար 18-ի ընտրութիւնները նոր նշաձող կը հանդիսանան հայաստանեան հետագայ ընտրութիւններու համար:

«Ընտրութիւնները շատ կարեւոր են: ԱՄՆ-ի հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ հանդիպման ժամանակ ընտրութիւններու մասին յաճախ խօսք կ'ըլլար եւ ես կ'անդրադառնայի Մայիսին տեղի ունեցած ընտրութիւններուն կը կը յայտնէի դրական տեղաշարժերու մասին, որ նկատուած են այդ ընտրութիւններու ժամանակ: Մասնաւորապէս. բարելաւուած էր լրատուամիջոցներու հասանելիութիւնը, լաւի դարձած էին ընդդիմութեան եւ անկախ ձայները: Սակայն Մայիսեան ընտրութիւններուն եւս խնդիրներ կային, եւ այդ խնդիրները արձանագրուած էին ԺՄՀԻԳ դիտորդներուն եւ այլոց կողմէ», յայտնած է Ամերիկայի դեսպանը:

Դեսպան Հեֆերն շեշտած է, որ միջազգային հանրութիւնը Կ'ակնկալէ եւ Հայաստանի Նախագահն ալ պատրաստակամութիւն յայտնած է, բարելաւելու ընտրութիւնները մայիսեան ընտրութիւններուն հետ համեմատած:

Վերջաւորութեան դեսպանը յոյս յայտնած է, որ այս ընտրութիւնները ըլլան ամենալաւը հայաստանեան ընտրութիւններուն մէջ:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ ԹՈՒՐՔԻԱՅԷՆ ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ ՔՆՆՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԴԷՄ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐՈՒ ՇՈՒՐՋ

«Միջազգային Ներում (Amnesty International) իրաւապաշտպան կազմակերպութիւնը Թուրքիոյ իշխանութիւններուն կոչ ըրած է Իսթանպուլի մէջ տարեց հայ կանանց հանդէպ յարձակումներու շարքի արագ, համակողմանի եւ անկողմնակալ հետաքննութիւն սկսիլ:

Կազմակերպութիւնը յիշեցուցած է, որ անցեալ երկու ամիսներու ընթացքին, Իսթանպուլի կեդրոնը գտնուող եւ պատմականօրէն հայերով բնակեցուած Սամաթիա շրջանին մէջ 4 յարձակումներ գործուած են: Բոլոր 4 կանայք եղած են հայկական ծագումով Թուրքիոյ քաղաքացիներ:

«Թրքական իշխանութիւնները պարտաւոր են քննել այդ յանցագործութիւններու ենթադրեալ ցեղային ատելութեան կամ կրօնական բնոյթը եւ քննել զանոնք՝ համապատասխան Մարդու իրաւունքներու եւրոպական ուխտին»:

«Ցաւալի է, որ Թուրքիոյ օրէնսդրութիւնը չի նախատեսեր որեւէ օրէնսդրական եւ քաղաքական միջոցառում՝ երաշխաւորելու ատելութեան շարժառիթներու համակարգուած եւ մանրակրկիտ կերպով ուսումնասիրութիւնը ու պատշաճ կերպով հաշուի առնուիլը: Ոստիկանութիւնը կը պնդէ, որ իրենք դէպքերը կը քննեն մանրակրկիտօրէն: Սակայն Amnesty International-ը մտահոգուած է հրապարակային յայտարարութիւններով, որոնք կատարուած են պաշտօնեաներու կողմէ՝ նկատի չառնելով յարձակումներու ցեղային շարժառիթներ ունենալու հաւանականութիւնը»,-ըսուած է յայտարարութեան մէջ:

Միւս կողմէ, Թուրքիոյ Մարդու Իրաւունքներու Կազմակերպութեան Իսթանպուլի գրասենեակի նախագահ Մերալ Ջըլդըրը ըսած է, որ Սամաթիայի հայ բնակիչները մտահոգուած են, որ այս յարձակումները կը կատարուին ազգային խտրականութեան հողի վրայ եւ կրնան շարունակուիլ քանի տակաւին «հայ» բառը որպէս հայհոյանք կ'օգտագործուի:

Յայտնենք որ, միայն վերջին մէկ ամսուայ ընթացքին, Սամաթիա թաղամասին մէջ յարձակումի ենթարկուած է 4 հայ կին եւ սեփական տան մէջ դաժանօրէն սպաննուած է՝ 84-ամեայ հայուհի Մարիցա Քիւչուք, որուն մարմինի վրայ յայտնաբերուած էր դանակի 8 հարուած:

# ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԻՐԱՒՈՒՆՔԸ

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Հայաստանի եւրոպացի բարեկամներ կազմակերպութեան հարցման համաձայն, Սերժ Սարգսեանը նախագահի ընտրութեանը կը ստանայ 68,6 տոկոս ձայն:*

*«Ամենայն հայոց սոցիոլոգի» տուեալներով, Սերժ Սարգսեանի օգտին պատրաստ է քուէարկել կողմնորոշուած ընտրողների 72 տոկոսը: Քանի՞ տոկոս է ուզում Սերժ Սարգսեանը: Ի վերջոյ, ի՞նչ է անելու նա այդ տոկոսները: Բանը զուտ անձնական փառասիրութի՞ւնն է, որ Տէր-Պետրոսեանին ու Քոչարեանին ցոյց տայ, թէ որտեղ են «ձմեռում խեցգետինները» կամ նախկին նախագահները, թէ՝ տոկոսներն ունենալու են տնտեսական կամ քաղաքական պրակտիկ նշանակութիւն: Դժուար է ասել: Իր նախագահական գործունէութեան հնգամեակի ընթացքում Սերժ Սարգսեանը ցոյց տուեց, որ փառասիրութիւնն իր համար ամենեւին երկրորդական բան չէ:*

*Միեւնոյն ժամանակ, Սարգսեանի գործունէութեան հիմքն անկասկած հաշուարկն է՝ պրագմատիկ, զուցէ դանդաղ, բայց գրեթէ անվրէպ հաշուարկը: Այդ իմաստով, եթէ 68-72 տոկոսի սահմանում կայ փառասիրութիւն, ապա հաշուարկը թերեւս դրանից պակաս չէ: Այսինքն, Սերժ Սարգսեանին ըստ ամենայնի այդ տոկոսները պէտք են ոչ միայն անձնական գերազանցութեան, այլ նաեւ յետագայ քաղաքական գործունէութեան համար: Նախ, նա կարծես թէ մտադիր է ամէն ինչ աւարտել մէկ փուլով: Երբ Սերժ Սարգսեանը մէկ փուլի գնաց 2008 թուականին, դա միանգամայն տրամաբանական ու պարզ է: Բանն այն չէ, որ իրավիճակը լարուած էր: Խնդիրն այն էր, որ նա իշխանութիւն ստացող նախագահ էր, իսկ որքան շատ լինէին ստանալու փուլերը, այդքան շատ էր նա ստիպուած լինելու զիջել փոխանցողին՝ Ռոբերտ Քոչարեանին: Իսկ 2008-ին արդէն իսկ մի փուլ եղել էր՝ 2007 թուականի խորհրդարանի ընտրութիւնը: Երկրորդ փուլը նախագահի ընտրութիւնն էր, ու եթէ այն եւս մէկ փուլ ունենար, ապա դա կը նշանակէր երեք փուլ:*

*Այսինքն, Սերժ Սարգսեանը դեռեւս ընտրարշաւից առաջ էր որոշել, որ ամէն ինչ պէտք է աւարտել նախագահի ընտրութեան մէկ փուլով: Աւելին, ամենեւին պէտք չէ բացառել, որ Ռոբերդ Քոչարեանը դէմ չէր լինի Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ պայմանաւորուել երկրորդ փուլի հարցում: Բայց Սերժ Սարգսեանի համար պարզ էր, որ այդ պայմանաւորուածութիւնը լինելու էր իր հաշուին: Ամենեւին պատահական չէր ընտրական թոհուբոհից յետոյ Մոսկուայում Փութինին նախագահի ընտրութեանն աջակցելու համար Սերժ Սարգսեանի հրապարակաւ շնորհակալութիւն յայտնելը: Նրան փաստացի յաջողուել էր համոզել Փութինին, որ երկրորդ փուլն աւելորդ է եւ վտանգաւոր:*

*Պատահական չէ նաեւ, որ տարիներ անց Ռոբերդ Քոչարեանը ակնարկեց՝ յայտնուելով ծանր քաղաքական դրութեան մէջ, որ Մարտի 1-ին մարդիկ սպանուել են այն հատուածներում, ուր ոչ ընդդիմութիւնն էր վերահսկում, ոչ իշխանութիւնը: Հիմա, ֆորմալ առումով, Սերժ Սարգսեանն իհարկէ իշխանութիւն վերցնելու խնդիր չունի, այսինքն ոչ ոք նրան ոչինչ չի փոխանցելու: Հետեւաբար նա կարող է իրեն թոյլ տալ երկրորդ փուլ, այդպիսով նաեւ «մրցակցային եւ ժողովրդավարական ընտրութիւն», նաեւ քաղաքական ստատուս-քուոյի առումով յետագայ մանեւրի հնարաւորութիւններ նախագահի ընտրութեան արդիւնքի հիման վրայ:*

*Առանցքային նշանակութիւնն իհարկէ այն է, թէ ինչպիսին կը լինի արտաքին աշխարհի վերաբերմունքը: Եթէ միջազգային հանրութիւնը կարեւոր համարեց երկրորդ փուլը, ապա Սերժ Սարգսեանը կը գնայ դրան: Եթէ այդ հարցը միջազգային հանրութեան համար կարեւոր չեղաւ, ապա Սերժ Սարգսեանն անձամբ բնականաբար շահագրգռուած կը լինի ամէն ինչ աւարտել առաջին փուլով, քանի որ ներքին կաշկանդող գործօններ դրա համար չկան:*

*Միջազգային հանրութեան համար, հարցն իհարկէ կարեւոր է ոչ թէ զուտ տեխնիկական-ձեւական առումով, այլ յետագայ զարգացումների տրամաբանութեան: Երկրորդ փուլը՝ համապատասխան մրցակից թեկնածուով, արդէն առաւել զգալի քայլ է ներքաղաքական ստատուս-քուոյի փոփոխութեան տեսանկիւնից: Իսկ ով էլ դուրս գայ երկրորդ փուլ, փաստացի հանդիսանալու է այսպէս ասած արեւմտեան ուղղութեան քաղաքական ուժ, քանի որ «ռուսական գիծը» հետ է քաշուել:*

*Դա կարող է նոր տրանսֆորմացիայի բերել քաղաքական դաշտում՝ անհրաժեշտ PR տեխնոլոգիաներ գործածելու դէպքում, եւ էապէս փոխել Հայաստանի ներքաղաքական ստատուս-քուոյի այսպէս ասած արտաքին վեկտորը, երբ կը լինի ոչ թէ դիվերսիֆիկացման կուրսի մէջ գտնուող իշխանութիւն եւ «ռուսական գծի» ընդդիմութիւն ու այլընտրանք, այլ դիվերսիֆիկացման կուրսի իշխանութիւն եւ արեւմտեան վեկտորի ընդդիմութիւն:*

*Բայց, այդ հեռանկարին կարող է ընդդիմանալ Ռուսաստանը, երկրորդ փուլը դիտարկելով ստրատեգիական մարտահրաւէր իր համար: Այդ դէպքում Սարգսեանի համար իսկապէս բարդ կը լինի: Կամ Արեւմուտքն իր վրայ կը վերցնի Ռուսաստանի համաձայնութեան խնդիրը, կամ Սերժ Սարգսեանը ստիպուած կը լինի Արեւմուտքի առաջ իր վրայ վերցնել ներքին նոր պարտաւորութիւններ կամ դրանց նոր ժամկէտներ, փոխարէնը ստանալ մօտ 70 տոկոսանոց առաջին փուլի իրաւունք, յետոյ նաեւ Արեւմուտքի ֆինանսական աջակցութիւնը ստանալու համար:*

*«ԼՐԱԳԻՐ»*

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՄԵՍԻՋՆԵՐԸ

*ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ*

*Նախագահական ընտրութիւնների քարոզարշաւը կամաց-կամաց թէժանում է, բայց առայժմ այնքան էլ հասկանալի չէ, թէ ով ինչ է ուզում, կամ, քաղաքագիտական լեզուով ասած, ով ինչ մեսիջ է յղում հասարակութեանը: Բառերը շատ են, ասելիքը՝ քիչ, եւ արդիւնքում շիլաշփոթ է ստացւում: Կարծում ենք՝ արժէ փորձել յստակութիւն մտցնել այս հարցում:*

*Սկսենք Սերժ Սարգսեանից: Նրա հիմնական մեսիջը՝ «ես ձեզ տանելու եմ դէպի ապահով Հայաստան», իր մէջ որեւէ կոնկրետ խոստում չունի: Ասելիքը սա է՝ «մէկ ա ես եմ ընտրուելու, բայց շատ մի վախեցէք, շատ չեմ ցաւեցնի»: Այդպէս սովորաբար բժիշկներն են սրսկելուց առաջ հանգստացնում հիւանդին: Ընդ որում՝ հիւանդը դիմադրում է, որովհետեւ գիտի, որ իր առջեւ ոչ թէ իսկական բժիշկ է, այլ պատահաբար բժշկի խալաթ ճանկած մէկը, ով, սակայն, անկեղծօրէն հաւատում է, որ ի վիճակի է բուժել: Ի դէպ՝ համացանցում տարածուած այն տեսանիւթը, որտեղ Նազենի Յովհաննիսեանը Սերժ Սարգսեանի մուտքը դահլիճ համեմատում է Կարմիր ծովից Մովսէսի գալստեան հետ, դրա վկայութիւնն է: Այստեղ քծնանքի խնդիր չկայ: Պարզապէս այդ աղջիկը դերասանուհի է եւ անմիջապէս կռահել է ռեժիսորների ցանկութիւնը, այսինքն՝ հասկացել է, թէ յատկապէս ինչ տպաւորութիւն են ուզում ստեղծել քարոզարշաւի ռեժիսորները: Սերժ Սարգսեանն ինքն իրեն հենց այդպէս էլ պատկերացնում է՝ ահա ինքը գալիս է իր ժողովրդին տանելու դէպի ապահով Հայաստան, չորս բոլորն էլ հիացմունքից նուաղում են ու կանաչ տերեւներ ճօճում (Աստուածաշնչում արմաւենու տերեւներ են յիշատակւում): Մի խօսքով, Սերժ Սարգսեանի հիմնական մեսիջը սա է՝ ե՛ս եմ ձեր փրկիչը (այլ հարց է, որ բոլորը հենց իրենից են ուզում փրկուել):*

*Րաֆֆի Յովհաննիսեանի մեսիջներն անհասկանալի են, բայց ենթադրութիւններ անել կարելի է: Օրինակ՝ պատահական վարսաւիրանոցում մազերը խուզելը միանգամից մի քանի մեսիջ է պարունակում՝ 1. Ես գլուխ ունեմ, 2. Ես հասարակ մահկանացու եմ, եւ իմ գլխի մազերը նոյնպէս աճում են, 3. Նախագահ ընտրուելուց յետոյ էլ եմ ինձ նոյն կերպ պահելու՝ շփուելու եմ բոլորի հետ: Այլ հարց է, որ այս մեսիջները բացարձակապէս անիմաստ են, որովհետեւ հասարակութիւնը բոլորովին այլ ակնկալիքներ ունի յաջորդ նախագահից (յամենայն դէպս Հայաստանի հիմնական պրոբլեմն այն չէ, որ գործող նախագահը թաքուն է խուզում մազերը):*

*Հրանտ Բագրատեանի հիմնական մեսիջն աւելի հասկանալի է. «ես գիտեմ, թէ ինչպէս կարելի է երկրի տնտեսութիւնը դուրս բերել այս վիճակից»: Բայց սա էլ աւելի շատ յաջորդ վարչապետի, քան յաջորդ նախագահի ծրագիր է: Յիշում էք, չէ՞, յայտնի անեկդոտը, թէ ինչպէս են ապարանցուն նշանակում ոստիկանապետ, ու նա առաջին հրամանագրով ինքն իրեն «ԳԱԻ պետ» է նշանակում: Հիմա այնպիսի տպաւորութիւն է, թէ նախագահ ընտրուելուն պէս Հրանտ Բագրատեանն ինքն իրեն վարչապետ է նշանակելու: Բայց ամէն դէպքում՝ սա գոնէ միակ ծրագիրն է, որտեղ շատից-քչից կոնկրետութիւն կայ:*

*Միւս թեկնածուներն առանձնապէս ոչ մի մեսիջ չունեն: Պարոյր Հայրիկեանն իր տարերքի մէջ է, ոեւէ մէկին առանձնապէս չի խանգարում եւ վայելում է իր անցեալի դափնիները: Շատ էլ լաւ է անում. ուրիշները 8 միլիոն դրամը մի երկու ժամում տանուլ կը տային կազինոյում, իսկ ինքն այդ գումարը ծախսում է շատ աւելի արժանավայել հաճոյքի համար: Անդրէաս Ղուկասեանը Սերժ Սարգսեանին կոչ է անում հանել թեկնածութիւնը (լաւ իմանալով, որ նա այդպիսի բան չի անի), Արամ Յարութիւնեանը՝ հակառակը, միւսներին է կոչ անում հանել թեկնածութիւնները եւ Սերժ Սարգսեանին թողնել մենակ (լաւ իմանալով, որ նման բան տեղի չի ունենայ), Արման Մելիքեանն առայժմ յայտնի չէ, թէ ինչ է անում, եւ վերջ: Ահա եւ ամբողջ քարոզարշաւը:*

*Կարող են հարցնել՝ իսկ ո՞րն է այս յօդուածի մեսիջը: Հիմնական ասելիքն այն է, որ այսօր քաղաքական պայքարն ընթանում է երկու զուգահեռ հարթութիւններում: Մի դէպքում պայքարն ընթանում է նախագահի եօթ թեկնածուների միջեւ, միւս դէպքում՝ Սերժ Սարգսեանի եւ ընտրութիւններին չմասնակցող քաղաքական ուժերի միջեւ: Ընդ որում՝ առաջին հարթութիւնում պայքարը կարճաժամկէտ է (եւ մեծ հաշուով՝ կանխատեսելի), իսկ երկրորդում դեռ ամէն ինչ աւարտուած չէ (դրա համար էլ հասարակութեան զգալի հատուածը հենց այդ պայքարի հետ է յոյսեր կապում): Այնպէս որ՝ սպասենք նորանոր մեսիջների:*

*«ՉՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ,- «ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԷՍԸ ՇԱՏ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԴԵՐ ՈՒՆԵՑԱՒ»

*Հայ ազգային կոնգրէսի նախկին անդամ Դաւիթ Շահնազարեանը Հայաստանի քաղաքական համակարգի «անապատացման գործում» տեսնում է կոնգրէսի մեղքը:*

*«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում նման յայտարարութիւն արեց 1994-95թթ. Հայաստանի ԱԱԾ ղեկավարած Դաւիթ Շահնազարեանը, ով մինչեւ անցած տարուայ Մարտ ամիսը Հայ ազգային կոնգրէսի անդամ էր:*

*Շահնազարեանը նշեց, թէ այս նախագահական ընտրութիւններին քաղաքականապէս չի սատարելու ոեւէ թեկնածուի, քանի որ «չկայ ընդգծուած ընդդիմադիր թեկնածու, ով ձեռնոց է նետել իշխանութեան թեկնածուին», սակայն քուէարկելու է Հրանդ Բագրատեանի օգտին:*

*«Ոչ Հայ ազգային կոնգրէսը, ոչ Հայ ազգային կոնգրէսի դաշնակիցները չմասնակցեցին այս ընտրութիւններին, որովհետեւ ակնյայտ էր՝ նրանց նպատակն էր այս ընտրութիւնները վերածել օլիգարխիկ համակարգի ներքին պայքարի: Օլիգարխիկ թեւերը իրար հետ, ըստ էութեան, համաձայնութիւն կնքեցին, եւ ակնյայտ է, որ «Բարգաւաճ Հայաստան»-ը այս կարգավիճակով շատ անյարմար է իրեն զգում, որովհետեւ այլեւս այլընտրանք չէ, իսկ ընդդիմադիր գործունէութիւն, ընդհանրապէս քաղաքական գործունէութիւն, դասական իմաստով, ես չեմ պատկերացնում ինչպէս է իրականացնելու», - կարծիք յայտնեց Շահնազարեանը, յաւելելով՝ -*



ՀԱԿ-ի նախկին անդամ Դաւիթ Շահնազարեան

*«Ակնյայտ է, որ ընտրութիւններից յետոյ «Բարգաւաճ Հայաստան»-ը մաս կը կազմի իշխանութեան: Դա ձեւականօրէն կը ձեւակերպուի կոալիցիայում, թէ ոչ ձեւականօրէն, եւ որեւէ քաղաքական ապագայ ես այստեղ չեմ տեսնում»:*

*Անդրադառնալով Հայ ազգային կոնգրէսի ապագայի մասին մեր հարցին, Շահնազարեանն ասաց, թէ չի ուզում այդ հարցը շօշափել: Այդուհանդերձ, ՀԱԿ նախկին անդամը նշեց, - «Մի բան փաստ է, որ այդ քաղաքագիտական վերլուծութիւնից յետոյ քաղաքական համակարգը Հայաստանում աւելի քան այլասերուած է, եւ այսպիսի թոյլ քաղաքական համակարգ մենք չունէինք: Այո, այսօր Հայաստանի քաղաքական համակարգը յիշեցնում է մի անապատ, եւ չկայ այն օազիսը, որ լուրջ յոյսեր կարողանայ ներշնչել հասարակութեանը եւ հասարակութիւնն էլ խիստ հիասթափուած է ողջ քաղաքական համակարգից»:*

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ. «ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԷՏՔ Է ՄՏԱԾԵՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

*Աշխատատեղեր ստեղծելու մասին պէտք է մտածի ոչ միայն պետութիւնը, այլ նաեւ տեղական իշխանութիւնները: Այդ մասին յայտարարել է Հայաստանի նախագահի թեկնածու Սերժ Սարգսեանը՝ ելոյթ ունենալով Նոյեմբերեան քաղաքի ընտրողների առջեւ:*

*Նրա խօսքով, աղքատութեան յաղթահարումը չպէտք է լինի տհաճ եւ քննարկման համար փակ թեմա:*

*«Նախկինում մենք չէինք ցանկանում արծարծել աղքատութեան մէջ ապրող, կարիքաւոր մեր բարեկամների եւ հարեւանների թեման:*

*Առաջին հերթին, իրերի նման վիճակի համար մեղաւոր է իշխանութիւնը, որ պայմաններ չի ստեղծում, որ աշխատող մարդը կարողանայ անհրաժեշտ պայմաններ ստեղծել իր ընտանիքի համար: Ուստի մեր սոցիալ-տնտեսական քաղաքականութիւնը պէտք է միտուած լինի աղքատութիւն ծնող պատճառների վերացմանը: Նպաստներ եւ թոշակներ բաժանելով՝ մենք չենք կարող լուծել այդ խնդիրը: Ես բազում անգամներ ասել եմ, ասում եմ եւ հիմա. Նպաստներ պէտք են միայն այն մարդկանց, որոնք ի վիճակի չեն աշխատել: Ի՞նչ է նշանակում, առողջ մարդը, ոտուձեռը տեղը, բայց չի աշխատում: Դեռ մտածում է, թէ ինչպէս պետութիւնը նպաստն աւելացնի: Բոլորովին այլ է, երբ այդպէս մտածում է տարիքով մարդը: Մենք պէտք է մտածենք աշխատատեղերի ստեղծման մասին, յատկապէս նախկին արդիւնաբերական քաղաքներում: Հենց գործազրկութիւնն է արտագաղթի հիմնական պատճառը: Փոքրիկ քաղաքից յաճախ գալիս են Երեւան, բայց աշխատանք չգտնելով հեռանում արտերկիր»,- նշել է նախագահը՝ յաւելելով, որ մարդիկ դրա պատասխանատուութիւնը բարդում են պետութեան վրայ, բայց համայնքի ղեկավարի ակտիւութիւնն էլ կարեւոր դեր է խաղում:*

# ՈՐՔԱ՞Ն ՀԱՅԱՍՏԱՆՑԻ Է 2012-ԻՆ ԱՅՑԵԼԵԼ ԹՈՒՐՔԻԱ

*Թուրքիա մեկնող հայաստանցիների թիւը 2012-ի Յունուար-Դեկտեմբեր ամիսների ընթացքում կազմել է 70,956 հոգի:*

*Ինչպէս NEWS.am-ը տեղեկանում է Թուրքիայի մշակոյթի եւ տուրիզմի նախարարութիւնից, 2012-ի 12 ամիսների ընթացքում Թուրքիա այցելած հայաստանցիների թիւը 1,9 տոկոսով պակաս է նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ: 2012-ի Դեկտեմբերի Թուրքիա այցելած հայաստանցիների թիւը կազմել է 5,506 հոգի:*

*2011-ին Թուրքիա էր այցելել 72,393 հայաստանցի, որը 4,5 տոկոսով աւելի էր 2010-ի համեմատութեամբ:*

*2012-ին Թուրքիա կատարած այցելութիւններում ամենամեծ անկումը գրանցել են Իրանի քաղաքացիները՝ 37 տոկոս: 2012-ին Թուրքիա է այցելել 1,186.343 իրանցի: 2010-ին այդ թիւը կազմել էր 1,873.930:*

# «ԿԱՆԱՆՑ ՇԱՀԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ ՉԵՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ»

*«Կանանց շահերը ներկայացուած չեն այս նախագահական ընտրութիւններին», - կարծում է կանանց ռեսուրսային կենտրոնի տնօրէն Լառա Ահարոնեանը: Ըստ նրա՝ եղած թեկնածուները նախընտրական ծրագրերում չունեն դրոյթներ, որոնք պէտք է բարելաւեն կանանց վիճակը Հայաստանում, եւ ոչ էլ կան կին թեկնածուներ:*

*«Մեր հասարակութեան մէջ կան խոցելի խմբեր, որին մասնաւոր պէտք է անդրադառնալ: Եւ երբ մեր հանրապետութեան մէջ բնակչութեան յիսուն տոկոսից աւելին խնդիր ունի իր սեռի պատճառով, դու քո ծրագրում դրան կարեւոր տեղ պիտի տաս, բայց դա մենք չենք տեսնում», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց Լառա Ահարոնեանը:*

*Լառա Ահարոնեանի կարծիքով, Հայաստանի քաղաքական վերնախաւը չունի կամք կանանց հարցերի նկատմամբ լուրջ վերաբերմունք ձեւաւորելու ուղղութեամբ: Նա ուրախ կը լինէր, եթէ ԱԺ-ում կանայք աւելի մեծ թիւով ներկայացուած լինէին:*

*«Մենք հիմա այն փուլում ենք, որ կանայք պէտք է լինեն ներկայացուած, որ մարդկանց աչքը վարժուի, որ կանայք քաղաքականութեան մէջ են», - յաւելում է Ահարոնեանը:*

*«Ազատ դեմոկրատներ» կուսակցութեան փոխնախագահ Անուշ Սեդրակեանը, ով պատրաստւում էր առաջադրուել որպէս նախագահի թեկնածու, բայց չառաջադրուեց, «որովհետեւ ներկայ ուժերի բաշխումով բացառուեց լուրջ գաղափարական պայքարը», «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց, որ առաջադրուելու դէպքում չէր ցանկանայ, որ իրեն ընտրէին կին լինելու պատճառով, որովհետեւ «դա ոչ թէ իր արժանիքն է, այլ պարզապէս բնութեան պատահականութիւնը»:*

*«Հաւասար հնարաւորութիւններից Հայաստանում հաւասարապէս զրկուած են թէ՛ կանայք, թէ՛ տղամարդիկ», - ասաց «Ազատ դեմոկրատներ»-ի փոխնախագահը: - «Այսօր մենք չունենք Հիլարի Քլինթոն ոչ այն պատճառով, որ կանայք ճնշուած են, այլ որովհետեւ դաշտը շատ նեղ է»:*

*«Հայաստանում պէտք է իրացուեն ոչ թէ կանանց, այլ մարդու իրաւունքները», - յաւելեց Սեդրակեանը՝ վստահութիւն յայտնելով, որ երբ երկրում ազատութիւն տիրի, կանայք արագ կ'ինքնադրսեւորուեն բոլոր ոլորտներում ու կը մտնեն նաեւ քաղաքականութիւն:*

*Հայ կանանց ուժերին նա վստահ է ու չի կարծում, որ կանայք մեր երկրում ճնշուած են, յատկապէս, որ կարծում է, թէ «Հայաստանի բոլոր գաղափարական լոկոմոտիւները կանանց ձեռքին են՝ լրագրութիւնը, կրթութիւնը»:*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿԱՐԾԻՔՈՎ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԸՆԴԱՄԵՆԸ 1,5 ՄԻԼԻՈՆ ՄԱՐԴ ԿԱՅ

*Հայաստանի Հանրապետութեան ոստիկանութեան անձնագրային եւ վիզաների վարչութեան պետ Յովհաննէս Քոչարեանը պատասխանել է նախագահի թեկնածու Արման Մելիքեանի հարցմանը: Այդ մասին Յունուարի 29-ի մամուլի ասուլիսում յայտնել է անձամբ Մելիքեանը:*

*«Իմ հարցմանը պատասխանել են, որ 2007թ. մինչեւ 2013թ. Յունուարի 16-ը Հայաստանի քաղաքացիութիւն է ստացել 28859 մարդ, իսկ 2008թ. մինչեւ 2012թ. դեկտեմբերի 30-ը քաղաքացիութիւնից հրաժարուել է 2879 մարդ», - նշել է Մելիքեանը:*

*Ըստ նրա՝ դա դրական քայլ է իշխանութիւնների կողմից, սակայն բաւարար չէ, քանի որ բազմահազար մարդկանց հարցն անլուծելի է մնում: Մելիքեանը նաեւ վստահեցրել է, որ մինչեւ 2010թ. շուրջ 1 միլիոն 300 հազար մարդ լքել է Հայաստանը, իսկ 2010թ. յետոյ՝ եւս 200 հազարը: «Երկիրը լքած 1,5 միլիոն մարդուց մէկ միլիոնը ընտրական ձայնի իրաւունք ունի: դա նշանակում է, որ լաւագոյն դէպքում ներկայումս Հայաստանում մենք ունենք ընտրական ձայն ունեցող միայն 1,5 միլիոն մարդ: Մենք ակնկալում ենք, որ իշխանութիւնը կ'արձագանքի այս փաստին», - ասել է Մելիքեանը:*

*Նշենք, որ ոստիկանութեան տուեալների համաձայն ընտրողների ռեգիստրում նշուածների թիւը 2,5 մլն է:*

# ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՕԴԱՆԱՒԱԿԱՅԱՆԻ ՀԱՐՑԸ ԴԱՐՁԵԼ Է ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ ՔՆՆԱՐՈՒՈՂ ՀԱՐՑ

*Ստեփանակերտի օդանաւակայանի հարցը դարձել է առանցքային տարբեր մակարդակների հանդիպումներում: Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ հանդիպումում հարցի քննարկման փաստը NEWS.am-ի խնդրանքով մեկնաբանելիս, նշեց ԼՂՀ նախագահի մամուլի խօսնակ Դաւիթ Բաբաեանը:*

*«Օդանաւակայանի հարցը բացառապէս հումանիտար է: Ադրբեջանը հիստերիայով է վերաբերւում, այս քաղաքացիական հարթութեան հարցին, եւ իսկական գազազած է սկսել Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի դէմ: Աւելին՝ ցանկանում են աղճատել բանակցային գործընթացի էութիւնը»,- ասաց Բաբաեանը՝ նշելով, որ տպաւորութիւն է ստեղծւում, որ Բաքուի բոլոր ջանքերն ուղղուած են, ոչ թէ հակամարտութեան կարգաւորմանը, այլ ԼՂՀ եւ Հայաստանի զարգացմանը խոչընդոտելուն:*

*Ըստ նրա՝ միջազգային հանրութիւնը ստիպուած է արձագանքելու իրավիճակին, ընդ որում, ոչ միայն խօսքով: «Մենք բազմիցս յայտարարել ենք, որ օդանաւակայանը պէտք է գործի»,- եզրափակեց ԼՂՀ նախագահի մամուլի խօսնակը:*

# ԼՈՒՐԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՐՈՇ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

2013-ը նախագահների ընտրութեան տարի է լինելու Հարաւային Կովկասի բոլոր երկրների համար: Առաջինը կը սկսի Հայաստանը, գրում է The National Interest-ն իր՝ «Հայաստանի մշուշոտ ընտրութիւնները» վերնագրով անդրադարձում:

Ի՞նչ անակնկալներ կարելի է սպասել այս ընտրութիւններից, եւ ինչպիսի՞ ազդեցութիւն կ'ունենայ սա Հարաւային Կովկասում տիրող ընդհանուր իրավիճակի վրայ. հարցադրում է անում NI-ն:

Առաջիկայ ընտրութիւնները, թւում է, հիմնականում խորհրդանշական կը լինեն: Անկախ անցկացման ձեւից այս ընտրութիւնները անխուսափելիօրէն կը համեմատուեն 2008-ի ընտրութիւնների հետ. այն ժամանակ պաշտօնավարող Ռոբերդ Քոչարեանը արդէն 2 պաշտօնավարման ժամկէտ էր ունեցել եւ Սահմանադրութեամբ չէր կարող յաջորդաբար երրորդ ժամկէտ ունենալ:

«Իշխանութեան փոխանցումը Հայաստանի ներկայիս Նախագահ Սերժ Սարգսեանին ուղեկցուեց բախումներով՝ կառավարութեան եւ ընդդիմութեան միջեւ, որի հետեւանքով 10 մարդ էր զոհուել... Այս ողբերգութիւնը մի տեսակ հետապնդում է հանրապետութեան քաղաքական շրջանակներին, իշխող էլիտային, ինչպէս նաեւ ընդդիմութեանը», - գրում է աղբիւրը:

Ուստի, եզրակացութիւն է արւում յաջորդիւ, Հայաստանի քաղաքական դասը պէտք է ընտրողներին ցոյց տայ, որ դասեր է քաղել այդ ողբերգութիւնից, եւ որ նման քաղաքացիական բախում այլեւս երբեք տեղի չի ունենայ:

Աղբիւրն արձանագրում է, որ 2012-ի խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ հնարաւոր է եղել խուսափել նման բախումներից եւ բացէիբաց թշնամանքից, իսկ նախագահական քարոզարշաւները պէտք է ծառայեն այդ միտման ամրապնդմանը:

Գործող Նախագահ Սարգսեանին 2013-ի ընտրութիւնները պէտք է այլ կարգավիճակ բերեն հայաստանեան քաղաքական գործիչների շրջանակում. «պաշտօնավարման առաջին շրջանում նա ցոյց է տուել, որ ինքնաբաւ քաղաքական գործիչ է եւ իր նախորդի ստուերի տակ չի գտնւում»:

NI-ի գնահատականով՝ արտաքին քաղաքականութեան մէջ Սարգսեանը կարողացել է զերծ մնալ լուրջ սխալներից: Չնայած Անկարայի հետ յարաբերութիւնները կարգաւորելուն ուղղուած նրա ջանքերի քննադատութեանը պաշտօնավարման սկզբում, նա չի հատել կարմիր գիծը: Նա կարողացել է նաեւ Հայաստանի արտաքին յարաբերութիւնները պահպանել ինչպէս Ռուսաստանի, այնպէս էլ ԱՄՆ-ի հետ: Իսկ ԱՄՆ-ի ու Եւրոպայի հետ յարաբերութիւններում նա նոյնիսկ ձեռքբերումների է ունակ եղել: Չնայած ի սկզբանէ Վաշինգտոնն ու Բրիւսելը նրա նախորդին «տարակուսանքով ու ակնյայտ անհաճութեամբ էին ընդունել»՝ յատկապէս 2003-ին նրա ազգայնական քարոզչութեան պատճառով: Ի տարբերութիւն Քոչարեանի Սարգսեանը հաւատարիմ է Լեռնային Ղարաբաղի բանակցութեան հարցերում կամ Թուրք-հայկական յարաբերութիւններում խաղաղութեան պահպանմանը: Նա նաեւ չի շեղւում Հայաստանի արտաքին քաղաքականութեան՝ աւելի վաղ սահմանուած նպատակներից:

NI-ի գնահատմամբ «հայկական ղեկավարութիւնն իր արտաքին քաղաքականութիւնը ամէն ինչից առաջ կառուցել է ռեալիզմի եւ ռացիոնալիզմի հիման վրայ»: Ըստ այդմ՝ Սարգսեանը լաւագոյն նախագահցուն է ինչպէս Մոսկուայի, այնպէս էլ Արեւմուտքի երկրների քաղաքական առաջնորդների համար:

Աղբիւրի գնահատականով Սարգսեանը նաեւ իր արդիւնաւէտութիւնն է ցոյց տուել ներքին հարցերում: Նշւում է, որ խորհրդարանական ընտրութիւնների ամենակարեւոր արդիւնքն էլ եղել է Հայ ազգային կոնգրէսի՝ խորհրդարանում տեղեր ձեռք բերելը: Ընդդիմութիւնը, սակայն, չի կարողացել որեւէ կենսունակ նոր քաղաքական առաջնորդների առաջ բերել: «Ընդդիմութեան տարբեր սիւների՝ լեզու չգտնելու հանգամանքը աւելի է հեշտացրել իշխանութիւնների գործը: Դրա արդիւնքը եղել է այն, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ երկրի առաջին յետխորհրդային նախագահը, հրաժարուել է մասնակցել այս տարուայ ընտրութիւններին», - գրում է NI-ն:

## ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲԸ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Է ՏԱՐԱԾԵԼ

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները հրապարակել են յայտարարութիւն Փարիզում Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներ Էդուարդ Նալբանդեանի եւ Էլմար Մամեդեարովի հետ ունեցած համատեղ հանդիպման մասին:

Նախարարների հետ Իգոր Պոպովի (Ռուսաստան), Ժակ Ֆորի (Ֆրանսիա) եւ Իեն Քելլիի (ԱՄՆ) հանդիպմանը մասնակցել է նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջէյ Կասպրչիկը:

Համանախագահները եւ նախարարները քննարկել են խաղաղութեան հաստատմանն ուղղուած աշխատանքային առաջարկը, որը կողմերին են ներկայացրել 2012 թուականի Հոկտեմբերին:

Նրանք նաեւ մտքեր են փոխանակել վստահութեան ամրապնդմանը նպաստող հնարաւոր քայլերի մասին:

Համանախագահները յիշատակել են 2012 թուականի Ապրիլի 14-ի եւ Յուլիսի 13-ի իրենց յայտարարութիւնները եւ նախարարների հետ քննարկել են դէպի Լեռնային Ղարաբաղ ու Լեռնային Ղարաբաղից քաղաքացիական չուերթների հարցը:

Երկու արտգործնախարարները եւ համանախագահները ընդգծել են ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի խաղաղութեան հաստատման հարցով բանակցութիւններ անցկացնելու կարեւորութիւնը:

Արտգործնախարարները վերահաստատել են իրենց հաւատարմութիւնը հիմնախնդրի խաղաղ կարգաւորմանն ու բանակցութիւնների շարունակմանը:

Նախարարները եւ համանախագահները համաձայնել են նոր քննարկումներ անցկացնել առաջիկայ շաբաթների ընթացքում:

## «ԵՍ ԱՆՁԱՄԲ ԵՄ ԻՎԱՆԻՇՈՒԻԼԻԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՏՈՒԵԼ ԱՔԱՏ ՉԱՐՁԱԿԵԼ ՉԱԽԱԼԵԱՆԻՆ».- ՍԱԱԿԱՇՈՒԻԼԻ




Ազատ արձակումէն ետք Վահագն Չախալեան Թիֆլիսի Ս. Էջմիածին եկեղեցիէն ներս

Վրաստանի նախագահ Միխէիլ Սաակաշուիլին ասել է, որ ինքն անձամբ է վարչապետ Բիձինա Իվանիշուիլիին խորհուրդ տուել բանտում պահել ջաւախահայ յայտնի գործիչ Վահագն Չախալեանին:

Յիշեցնենք, որ օրեր առաջ Վրաստանում ուժի մէջ մտաւ «Համաներման մասին» օրէնքը, որը, ընդհանուր առմամբ, տարածւում էր 18 հազար բանտարկեալի (խօսքն ինչպէս պատժի կրումից լրիւ, այնպէս էլ մասամբ ազատուելու մասին է) վրայ: Օրէնքի համաձայն՝ ազատ արձակուեց նաեւ Վահագն Չախալեանը. որը 2009թ. 10 տարուայ ազատազրկման էր դատապարտուել՝ «հանրային կարգը խախտող զանգուածային միջոցառումներ կազմակերպելու, խուլիգանութեան եւ զէնք պահելու» մեղադրանքներով:

## ԱԱԾ-Ն «ՄԵԾԱՑՐԵԼ Է ՃՆՇՈՒՄԸ «ՍԻՒԼԻԹԱՍԻ» ՆԿԱՏՄԱՄԲ»

Հայաստանի ազգային անվտանգութեան ծառայութիւնը (ԱԱԾ) մեծացրել է ճնշումը «Սիւլիլթասի» նկատմամբ եւ ձեռնամուխ է եղել հիմնադրամի գործունէութեան ողջ հինգամեայ շրջանի ուսումնասիրմանը: «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում այդ մասին յայտնեց «Սիւլիլթաս» հիմնադրամի տնօրէն Սալբի Ղազարեանը:

«ԱԱԾ-ն չի սառեցրել այդ գործը, ընդհակառակը գործը շարունակւում է, կարելի է ասել՝ նոյնիսկ ծաւալուել է, այլեւս այդ սկզբնական հարցերի մասին կարծես խօսակցութիւն չկայ, հիմա անցել ենք արդէն լրիւ ուրիշ ուղղութիւնների, խօսում ենք 2009-ի ինչ-որ ծրագրի մասին: Կարելի է արդէն ասել, որ սա ինչ-որ տեղ տրամաբանական սահմաններից անցել է, այսինքն մենք արդէն խօսում ենք կազմակերպութեան գործունէութեան, գործարքների, գործընթացների մասին, այն հարցերի մասին, որտեղ ընդհանրապէս պետական հիմնարկները, ըստ օրէնքի, միջամտելու տեղ կամ իրաւունք չունեն: Բայց այսօր մենք ոնց որ գնում ենք այդ ուղղութեամբ, փորձում են նոր հանգամանքներ յայտնաբերել, քննարկում են մեր տարբեր ծրագրերը տարբեր գործընկերների հետ, եւ գնում ենք մի անյայտ ճանապարհով», - ասաց Ղազարեանը:

Ղազարեանը նշեց, թէ Դեկտեմբեր ու Յունուար ամիսներին իրեն ու «Սիւլիլթասի» հիմնադիր Վարդան Օսկանեանին մի քանի անգամ կանչել են ԱԱԾ, սակայն իրենք ցուցմունքներ չեն տուել:

Նման ճնշումներ ունենում են մէկ արդիւնք. որ դու քո նախաձեռնած գործը մի կողմ դնես եւ զբաղուէս ճնշումներով

Յիշեցնենք՝ անցած տարուայ մայիսին ԱԱԾ-ում փողերի լուացման, յանցաւոր ճանապարհով ստացուած առանձնապէս խոշոր չափերով եկամուտներն օրինականացնելու յատկանիշներով քրէական գործ յարուցուեց, որն առնչւում էր «Սիւլիլթաս» հիմնադրամի գործունէութեանը: Այդ գործի շրջանակներում Ազգային ժողովի ԲՀԿ խմբակցութեան անդամ, նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանը նախ անցնում էր որպէս վկայ, իսկ մի քանի ամիս անց՝ Հոկտեմբերին, այն բանից յետոյ երբ խորհրդարանը Օսկանեանին զրկեց պատգամաւորական անձեռնմխելիութիւնից, ԱԱԾ-ն մեղադրանք առաջադրեց վերջինիս՝ «յանցաւոր ճանապարհով ստացուած եկամուտների օրինականացման» եւ «իւրացման» յատկանիշներով: Թէ Օսկանեանը, թէ «Սիւլիլթաս» հիմնադրամի ներկայացուցիչները յայտարարել են, որ քրէական գործի իրական նպատակը իրենց նկատմամբ քաղաքական ճնշում գործադրելն է:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին ի պատասխան, թէ կարծո՞ւմ է արդեօք, որ Օսկանեանի նկատմամբ ճնշում էր գործադրւում, որպէսզի ԲՀԿ-ն նախագահի թեկնածու չառաջադրէր, Ղազարեանը պատասխանեց. -«Ես չեմ կարող ասել, թէ դա էր նպատակը կամ միակ նպատակը, բայց որ ընդհանրապէս նման ճնշումներ ունենում են մէկ արդիւնք. որ դու քո նախաձեռնած գործը մի կողմ դնես եւ զբաղուէս ճնշումներով: Եթէ այդ կերպ նպատակ ունէին կամ Օսկանեանին իր ընտրած քաղաքական ուղուց շեղելու, կամ հիմա նպատակ ունեն «Սիւլիլթասին» իր ծրագրերից շեղելու, դա հասկանալի աւանդական փորձ է»:

www.massisweekly.com

## ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ
## ԽԱՌՆԱԿ ՎԻՃԱԿ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՍՏԱՏՈՒԵՑԱՒ



Եգիպտական յեղափոխութեան 2րդ տարեդարձին առթիւ, երկրի շատ մը քաղաքներու մէջ զանգուածային ցոյցեր տեղի ունեցան: Բողոքող հազարաւոր ցուցարարները իրենց դժգոհութիւնը կը յայտնէին նորահաստատ իշխանութիւններու դէմ, որոնք բացայայտօրէն անտեսած են ժողովուրդի պահանջները եւ կ՚աշխատին ոտնահարել դեմոկրատական սկզբունքները, ճամբայ հարթելով դէպի իսլամական մենատիրութիւն:

Շուրջ շաբաթ մը տեւող ցոյցերու ընթացքին տեղի ունեցան բռնարարքներ եւ ահաբեկչական արարքներ, որոնց հետեւանքով սպաննուեցան 50 հոգիներ: Վայրագութեանց վերջ տալու մտահոգութեամբ եգիպտական բանակն սկսաւ փողոց իջնել եւ քաղաքացիներ ձերբակալել: Այնուհետեւ յայտարարուեցաւ ստիպողական վիճակ կարգ մը քաղաքներու մէջ, ինչպէս նաեւ կրակմարի դրութիւն գիշերուան ժամը 9էն մինչեւ առաւօտեան ժամը 6:

Արդարեւ ընդդիմադիր շարժումը ներկայիս կը ղեկավարէ հանրապետութեան նախագահի նախկին թեկնածու, Սահմանադրութիւն կուսակցութեան նախագահ՝ Մուհամմատ Պարատայը: Այս վերջինը կը մերժէ կառավարութեան հետ երկխօսութեան նստիլ կացութեան լուծում մը տալու համար: Ան կը պահանջէ որ յարգուին երկխօսութեան համար առաջարկած իր նախապայմանները, որոնց գլխաւորներն են՝ առկախել նոր սահմանադրութիւնը եւ զայն բարեփոխել, ինչպէս նաեւ կազմել «Ազգային փրկութեան ճակատ»ի կառավարութիւն մը: Եգիպտոսի տագնապի լուծումը քաղաքական երկխօսութեամբ միայն կարելի պիտի ըլլայ:

## «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆ»Ը ԱՇՈՒՆ ԲԵՐԱՒ ՊԱՀՐԷՅՆԻՆ

Շուրջ երկու տարիէ ի վեր զանգուածային ցոյցերը կը շարունակուին երկրէն ներս, պահանջելով ժողովրդավարական կարգերու հաստատում եւ քաղաքական բանտարկեալներու ազատ արձակում:

Կառավարութիւն արգիլած է բժիշկներուն դարմանել վիրաւոր ցուցարարները: Այս առթիւ բժիշկներն ալ միացած են ցուցարարներու շարժումին: Իշխանութիւնները բիրտ ոյժ գործածելով ձերբակալած են հիւանդանոց ժամանող վիրաւորներն ու զիրենք դարմանող բժիշկներն ու բուժ-քոյրերը:

Արդարեւ Մարդու Իրաւունքներու Պաշտպան Միջազգային Կազմակերպութիւնը խիստ ոճով բողոքագիր մը յղած է Պահրէյնի իշխանութիւններուն:

## ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ ԲԱԽՈՒՄՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄՕՏ

Լիբանանցի քաղաքական բանտարկեալ Ժորժ Իպրահիմ Ապտալլայի ազատ արձակման շուրջ դատարանի նիստը յետաձգուած է Փետրուարի 28ին: Այս լուրը խոր ընդվզում պատճառած է որոշ շրջանակներու մէջ, որուն հետեւանքով բողոքի ցոյցեր տեղի ունեցած են Պէյրութի Ֆրանսական դեսպանատան մօտակայքը:

Կ՚իմանանք նաեւ թէ 14 պաղեստինցիներ փոխադրող հանրակառք մը առեւանգուած է եւ ուղեւորուած անորոշ ուղղութեամբ մը: Դէպքը կատարուած է Դամասկոսի մօտերը:

## ՄԷԿ ՈՒ ԿԷՍ ՄԻԼԻԱՌ ՏՈԼԱՐ՝ ՍՈՒՐԻԱՑԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՆ



Քուէյթ երէկ հիւրընկալեց սուրիացի գաղթականներուն օժանդակելու նպատակով կազմակերպուած համագումար մը, որուն մասնակցեցան արաբական եւ այլ աւելի քան 50 պետութիւններ, քննարկելու գաղթականներուն եւ զանոնք ընդունող պետութիւններուն օգնութիւններ փոխանցելու միջոցները: Քուէյթ, Սէուտական Արաբիա եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններ իւրաքանչիւրը նուիրեց 300 միլիոն տոլար, մինչ հանգանակութեան ընդհանուր թիւը հասաւ մէկ ու կէս միլիառ տոլարի: Համագումարին մասնակցեցաւ նաեւ Լիբանանի պատուիրակութիւնը:

Հանրապետութեան նախագահ Միշէլ Սլէյման անհրաժեշտ համարեց գաղթականներուն օժանդակութիւններու ներկայացումը, նկատի առնելով որ Լիբանան վերջին հանգրուանին մեծ աշխատանք տարած էր ապահովելու գաղթականներուն կարիքները, սակայն արդէն սպառած են օժանդակութիւններու փոխանցման միջոցները, հակառակ որ Լիբանան իր սահմանները բաց կը ձգէ փախստականներուն առջեւ: «Մենք կարիք ունինք 370 միլիոն տոլարի եւ մեր գործընկերներու օգնութեան, գործադրելու համար կառավարութեան ծրագիրը: Կը մնայ յուսալ, որ Սուրիոյ մէջ կը հասնին քաղաքական լուծումի, վերջ կը դնեն բռնութիւններուն եւ սուրիացի գաղթականները կը վերադառնան տուն», ըսաւ Սլէյման: Նախագահին խօսքով, գաղթի հոսքը սկսած է ազդել Լիբանանեան շրջանակներուն վրայ, ապահովական եւ տնտեսական առումով: Սլէյման Քուէյթի մէջ տեսակցութիւններ ունեցաւ իշխանին, Յորդանանի թագաւորին, Թունուզի նախագահին, ՄԱԿի եւ Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղարներուն հետ:

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Պան Քի Մուն Սուրիոյ կառավարութեան կոչ ուղղեց վերջ տալու բռնութիւններուն եւ սպանութեան: Անոր համաձայն, 1,5 միլիառ տոլար անհրաժեշտ է, օգնելու Սուրիացի գաղթականներուն: «Օգնութիւնները սակայն բաւարար չեն, այլ անհրաժեշտ է քաղաքական շտապ լուծում», ըսաւ Պան:

Յորդանան ապաստանած սուրիացի գաղթականներու թիւը հասած է աւելի քան 70 հազարի: Այս թիւը օրէ օր կ՚աւելնայ: Հիւսիսային Յորդանանի մէջ հաստատուած է յատուկ վրանաքաղաք: Ժողովուրդի մեծ մասը անօգնական է: Սուրիացի գաղթականներու մէկ կարեւոր մասն ալ տեղափոխուած է երկրի տարբեր շրջանները:

Լիբանան հաստատուած գաղթականներու թիւը հասած է 223 հազարի: Անոնք Լիբանանեան պետութենէն եւ միջազգային ու շրջանային կազմակերպութիւններէն կը ստանան մասնաւոր օժանդակութիւն:

Միւս կողմէ Լիբանանի Յառաջդիմական-Սոցիալիստ Կուսակցութեան նախագահ եւ Տիւրզի համայնքի պարագլուխ Ուալիտ Ճամպլաթ, Փարիզի մէջ յայտարարութեան մը ընթացքին կոչ ուղղած է սուրիացի տիւրզիներուն չի միանալ ասատեան ջոկատներուն: Արդարեւ Ուալիտ Ճամպլաթ Ֆրանսայի նախագահ Օլանտէն խնդրած է սուրիական կռիւները Լիբանան չի փոխադրել:

OFFICES FOR RENT IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ
Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* $50,00 * $100,00 (first class) for USA
$ 100,00 (Air Mail) for Canada.
$ 250,00 (Air Mail) Overseas.
Name: ----------------------------------------
Address: ----------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: -------------
Tel :---------------------- Fax : -------------------------

# ԻՆՉՈՒ ԱՅԴՊԷՍ ԷԼ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵԱՆՔԸ ՉԻ ԼԱՒԱՆՈՒՄ

ԱՆԱՆԻԱ ՄԱՂԱՔԵԱՆ

1990թ.-ից սկսած ովքեր մշտապէս բնակուել են Հայաստանում, հաստատ կարող են վկայել, որ նախընտրական ժամանակահատուածներում նախագահի բոլոր թեկնածուները խօսում են միայն ժողովրդի անունից, ներկայացնում իդեալական նախընտրական ծրագրեր եւ պլատֆորմներ՝ ի շահ ժողովրդի բարօրութեան, բոլորն իրենց ներկայացնում են որպէս ժողովրդի ծառաներ, սակայն ընտրութիւնների աւարտից յետոյ հիմնականում մոռանում իրենց տուած խոստումների մասին: Նրանք առաջնորդւում են միմիայն իրենց յարմարութեամբ, որը համարեա դոյզն անգամ աղերս չունի իրենց տուած խոստումների հետ: Իհարկէ, մինչեւ հերթական նախընտրական քարոզարշաւը, նրանց կուսակիցները մամուլով, հեռուստատեսութեամբ եւ զանգուածային լրատուութեան այլ միջոցներով պարբերաբար ներկայացնում են այն «քրտնաջան» աշխատանքները եւ դրանց թուային արդիւնքները, որոնց շնորհիւ իբր՝ կեանքի համարեա բոլոր ոլորտներում բաւականին բարելաւել են ժողովրդի վիճակը, սակայն արի ու տես, մեր «անշնորհակալ» ժողովուրդը ոչ մի անգամ չի ընդունում այդ իրողութիւնը: Աւելին, ժողովուրդն ամենուրէք, առիթ-անառիթ «բամբասում է». դէ եթէ այդ ամէնը ճիշտ է, ապա ինչո՞ւ իրենց ապրելակերպի մէջ որեւէ կոնկրետ առաջխաղացում չի նկատւում, (էսքա՞ն էլ երախտամոռ ժողովուրդ): Ուզում եմ հարց ուղղել մեր իմաստուն ժողովրդին. երկրում իրավիճակը անելանելի է, ինչքա՞ն կարելի է հանդուրժել, որ այս վիճակը այսպէս շարունակուի: Միթէ՞ հասկանալի չէ, որ ձեր հարցերը դուք պէտք է լուծէք, այնպէս որ պարտաւոր էք ինչ-ինչ ճանապարհներ գտնել՝ այս վիճակից դուրս գալու համար: Պատասխանը աւելի քան միանշանակ է. կարծում եմ, բոլորը կը համաձայնեն, որ այս հարցում յապաղելու ժամանակ չկայ, բոլորիս պարտքն է գիշեր-ցերեկ մտածել եւ ուղիներ փնտռել այս անելանելի վիճակից դուրս գալու համար: Սթափ մտածողութիւնը յուշում է, որ այս վիճակից փրկութեան միակ ելքը՝ այնուամենայնիւ ընտրութիւններն են: Մնում է ճշտել, թէ ինչպիսի ընտրութիւններ պէտք է անցկացնել, որը լուծի նաեւ ժողովրդի խնդիրները:

Մօտենում է հերթական նախագահական ընտրութիւնը, որը տեղի կ՚ունենայ 2013թ. փետրուարի 18-ին: Ինչ է սպասւում ժողովրդին եւ ինչ պէտք է անի նա, որպէսզի հերթական անգամ չյայտնուի քաւութեան նոխազի դերում: Ակնյայտ է, որ թեկնածուները հերթական անգամ կը նայեն ժողովրդի աչքերի մէջ եւ կշռայլեն հերթական փուչ խոստումները: Հաւանաբար որոշ թեկնածուներ մարդկանց կը բաժանեն հերթական 5000-ական դրամները, կը ստանան իրենց անհրաժեշտ ձայները եւ ամէն ինչ աւարտուած համարելով, կը գնան իրենց հիմնական գործին՝ հանգստանալու, իսկ ժողովուրդը հերթական անգամ կը մնայ նրանց նամակին սպասող: Երկու բառով ուզում եմ անդրադառնալ բազմիցս չարչրկուած 5000 դրամներին: Կարծում եմ մեր ժողովուրդն այնքան իմաստուն է, որ չարժէ այսպէս՝ տասնեակ տարիներ շարունակ էպոսներ հիւսել, որ ժողովուրդ ջան 5000 դրամ վերցնելով դուք վաճառում էք ձեր մօտակայ հինգ տարիների ապրուստը, որ դէմ էք գնում ձեր խղճին եւ այդպէս շարունակ: Իսկապէս 5000 դրամը՝ հինգ տարուայ համար շատ փոքր գումար է եւ այդ գումարը վերքին դարման չի անի: Սակայն, եթէ դուք որոշել էք անպայման վերցնել այդ կոպեկները, ապա գոնէ ճիշտ կողմնորոշուէք, թէ դրանից յետոյ ում պէտք է ընտրէք: Որեւէ մէկը չի կարող ձեզանից լաւ պատկերացնել ձեր վիճակը, այնպէս որ եկէք փորձէք պատուով դուրս գալ այս ոչ նախանձելի վիճակից: Առաջիկայ ընտրութիւններն այդ վիճակից դուրս գալու եզակի շանսերից մէկն է: Այլ խօսքով, գնդակն այս պահին ժողովրդի դաշտում է եւ մնում է այն դիպուկ նետի: Ասեմ, որ այստեղ եւս հեծանիւ հնարելու հարկ չկայ, պէտք է ճիշտ օգտուել աշխարհի փորձից: Այ, հենց այստեղ է թաղուած շան գլուխը: Լաւ, ինչպէս անենք, որ ընտրութիւնների ժամանակ հերթական անգամ չսխալուենք: Սթափ վերլուծելով անցած քսան տարիների փորձը, ժողովուրդը պէտք է ընտրի պրոֆեսիոնալ, նոր ասելիք ունեցող, նոր արժէքներ դաւանող թեկնածուի: Թեկնածուին պէտք է չափել ոչ թէ իր տուած խոստումներով, այլ իր կատարած գործերով: Այս դէպքում ժողովուրդն իր բազմադարեայ ներքին հոտառութեամբ՝ քարոզարշաւի ընթացքում պէտք է տարբերի զուտ խոստումներ տուողներին եւ խոստումները գործի վերածելու ունակ թեկնածուներին:

Պարզից էլ պարզ է, որ միայն ընտրական գործընթացները բաւարար չեն ժողովրդի կեանքում լուրջ եւ արդիւնաւէտ փոփոխութիւններ իրականացնելու համար: Ընտրութիւնների միջեւ ընկած միջակայքերում մշտապէս անհրաժեշտ է ժողովրդի ակտիւ եւ անմիջական մասնակցութիւնն ու վերահսկողութիւնը պետութեան կառավարման գործընթացներին: Իսկ դա հնարաւոր է, եթէ ժողո-

Շար.ը էջ 18

# ՕՊԱՄԱՅԻ «ՆԱԽԱԳԱՀԱԴՐՈՒԹԻՒՆԸ»

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ



Օպամայի նախագահադրութիւնը (Presidential Inauguration), որ տեղի ունեցաւ Ամերիկայի վայել ճոխ եւ տպաւորիչ ցերեկային եւ գիշերային պաշտօնական հանդիսութիւններով, շատ մը խորհրդածութիւններու կը մղէ ականատեսը:

Այդ հանդիսութիւնները ցոյց կուտան թէ ինչպէս Ամերիկան իր նախագահի պաշտօնին կը նայի ակնածանքով, եւ իր ամէն տեսակի կարելիութիւնները կը դնէ կազմակերպիչներու տրամադրութեան տակ, որպէսզի սքանչելի բծախնդրութեամբ եւ կարգապահութեամբ ընթանայ մեծարանքը իր հրամանատարին:

Ամերիկան հուչակաւոր է իր արձանագրած եզակի յաջողութիւններով:

Իր յեղափոխութիւններու մայր՝ Ամերիկեան Յեղափոխութեամբ (1776). իր անզուգական քաղաքաշինութեամբ եւ ամէնատարածեալ հարստութեամբ. իր բարձրագոյն գիտական եւ արուեստի մակարդակով. իր ամէնահզօր բանակով եւ առաջնորդ դրամանիշով. եւ վերջապէս իր ամէնակատարեալ ժողովրդավարութեամբ, որ տակաւին մօտիկ անցեալին անընդունելի նկատուող գոյնի եւ ծագումի տէր անձ մը, նախագահ կ՚ընտրէ եւ կը վերընտրէ:

Ամերիկան իր շահերու հետապնդումի քաղաքականութեամբ աշխարհը գուցէ կը խառնէ. պատերազմասէր աւանդութիւններով կամ շահախնդիր դիրքորոշումներով ժողովուրդներ կ՚անհանգստացնէ եւ բռնատէրեր իշխանութիւններու վրայ կը գետեղէ. սակայն, արդար է ըսել, թէ ան իր տան կարգը հեռու կը պահէ դուրսը կիրարկած իր աշխատանքի ձեւէն եւ վերաբերմունքէն:

Օպամայի նախագահութիւնը փաստն է Ամերիկայի ժողովրդավարութեան եւ արդարութեան եւ բոլոր տեսակի արժէքներուն, որոնք կը բնորոշեն անոր ներքին քաղաքական դիմագիծը:

Ամերիկայի պատկերը դուրսէն դիտուած չէ, այն ինչ որ ան կը թուի ըլլալ ներսէն դիտուած:

Երրորդ աշխարհի աչքով դիտուած, ան կը նկատուի դաւադրութիւններ սարքող եւ շատ ալ անգամ ժողովրդավար իշխանութիւններ տապալող եւ բռնապետեր հաստատող:

Եւրոպայի աչքով ան կը նկատուի «վերջին տեսած հարուստի» (Nouveau riche) որ իր դրամի ուժին պատճառաւ կը մեծարուի բայց չյարգուիր:

Արաբ եւ Իսլամ աշխարհին կողմէ կը նկատուի անարդար եւ կողմնակալ իրաւարար որ իր սուլիչը միշտ կը հնչեցնէ որպէսզի փէնալթի տայ հակառակորդ կողմին:

Երբ ներսէն դիտուի սակայն, ան կը ջանայ ինքզինքին տալ պատկերը պարկեշտ անձի մը (Gentleman) որ խտրութիւն չդներ գոյնի, սեռի եւ ծագումի տարբերութիւններու միջեւ, եւ ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն (Liberty, equality, fraternity) բառերուն կամ կարգախօսին շուրջ կը ջանայ դասաւորել եւ կարգաւորել իր կեանքը:

Ամերիկան որ Րէկընի եւ Պուշի նման նախագահներուն տուաւ զօրաւորին եւ հարուստին ծառայելու իշխանութիւն, տուաւ նաեւ իշխանութիւն իր ամէնախոնարհ դասակարգի շարքերէն բարձրացած Քլինթըններու եւ Օպամաներու որ անոնք ծառայեն նաեւ մնացեալներուն:

Մաղթելի է, որ Ամերիկան իր ներսը վարած քաղաքականութեամբ վարուի նաեւ դուրսը:




Bedros S. Maronian
818/500-9585
Siamanto B. Maronian
818/269-0909
SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs
6300 Wilshire Blvd. Suite 1900
Los Angeles, CA 90048
805 East Broadway
Glendale, CA 91205
300 N. Lake Ave. Suite 500
Pasadena, CA 91101
• Life Insurance
• Health Insurance
• Group & Individual
• Long Term Care
• Disability
• Estate Planning
• Will & Living Trust
• Full Annual Review
• Mortgage Protection
• College Planning
• Workman's Compensation
• Employee Benefits
• Annuity
• IRA
• 401K & 403B
A.B.A. INSURANCE SERVICES
New York Life · Anthem Blue Cross · BlueShield · Aetna · Health Net A Better Decision · CIGNA · KAISER PERMANENTE
Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits
Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ Է
Coverage & Protection should be on the top of your priority list.

# «ԼԱՐՔ»Ի ՆՈՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ՝ «ՄԻՔԱՏՕ»



ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Հայ իրականութենէ ներս իւրայատուկ երեւոյթ է մեր արուեստասէր հասարակութեան ներկայացնել իր բարքերուն, աւանդութիւններուն եւ առօրեայ կենցաղին խորդ՝ գեղարուեստական թեմաներ, որոնք, ընդհանրապէս չեն գոհացներ իր ազգային ակնկալութիւնները: Պարագան աւելի կը շեշտուի, երբ ներկայացումը օփերեթային բնոյթ ունի, որ լրիւ արտայայտութիւն կը գտնէ իրեն անծանօթ միջավայրի, սովորութիւններու, անուններու, յատկաբանական դարձուածքներու (idioms), անգամ, երաժշտական ոճի առանձնայատկութիւններուն մէջ: Հարցական կը թուէր ըլլալ հայ հասարակութեան դրական տպաւորութիւնը, ներկայացուելիք այս օփերեթի կապակցութեամբ: Բայց, գիտէինք նաեւ, որ մեր յանդուգն խմբավար Վաչէ Պարսումեան, տկար ճիւղի վրայ կոխողը չէր...:

Այդ մտածումներով մուտք գործեցինք Փասատինայի համերգասրահը Ambassador Auditorium, ներկայ գտնուելու «Միքատօ» կատակերգական օփերեթին, որ նախաձեռնուած էր Լարք Երաժշտական Ընկերակցութեան կողմէ, գործակցաբար համբաւաւոր Opera A La Carte-ի հետ: Ելոյթը տեղի կ'ունենար Շաբաթ Յունուար 19-ին, որ յաջորդական երկրորդ օրն ըլլալով, հանդիսատեսներու խուռներամ հոսք մը կար Փասատինայի Ambassador համերգասրահէն ներս:

«Միքատօ»ն կատակերգական օփերեթ մըն էր, որուն երկարար նիւթը վերցուած էր կայսերական ճաբոնի Տիտիփունի անուամբ երեւակայական քաղաքի մը մէջ: Գլխաւոր հերոսներն էին ճաբոնի կայսր ՝ երեւակայական Միքատոն (Ռիչըրտ Շէլտոն): Գահաժառանգ որդին՝ Նանքի-Փուն (Ռաֆֆի Քրպապեան), որ թափառական երգիչ դարձած, կը փնտռէր իր սիրած Եամ-Եամին՝ (Շուշիկ Պարսումեան): Նանքի-Փուն, պալատական մեծահասակ կին՝ Քաթիշայէն (Կարինէ Աւագեան) ձերբազատուելու համար, փախուստ տուած էր պալատէն: Ֆլըրթի մը պատճառաւ մահուան դատապարտուած Քօ-Քօն՝ որ դահճապետ կը նշանակուի յետագային: Ան իր կողմէ հովանաւորեալ Եամ-Եամի հետ ամուսնանալու համար քաղաք եկած էր: Իրագեկ դառնալով Եամ-Եամի հետ անոր ամուսնական ծրագրին՝ Նանքի-Փուն յուսահատ, իր ցաւին լուծումը կ'որոնէր անձնասպանութեան մէջ: ... Անշուշտ , դէպքերը գիրար կը յաջորդեն: Քօ Քօն, կայսերական հրամանով պէտք էր գլխատէր մէկը, այլապէս պաշտօնէ վար պիտի առնուէր: Նանքի-Փու համաձայն կը գտնուի, որ Քօ Քօն, պաշտօնազուրկ չի դառնալու համար, գլխատէր զինք, ամիս մը տեւողութեամբ ամուսնացած կեանք ապրելէ ետք Եամ-Եամի հետ: ... Ստեղծուած այս ծանր կացութեան մէջ, անպարտ արձակուելու համար, Քօ Քօն հարկադրաբար կ'ամուսնանայ մեծահասակ Քաթիշայի հետ, որ ամէն գնով կ'ուզէր պսակուիլ Նանքի-Փունի հետ: Իսկ գիրար սիրող Նանքի-Փու )որուն ինքնութիւնը կը բացայայտուի իբրեւ գահաժառանգ( եւ Եամ-Եամ՝ իրարու կը միանան ողջ Տիտիփունի տօնակատարութիւններու ուրախ մթնոլորտի մէջ:

Այս բոլորը տեղի կ'ունենային բեմահարթակի ընդարձակ տարածքին գործող դերակատարներով, որոնք հագած էին ծայրագոյն Ասիոյ աւանդական գոյնզգոյն տարազներ, դէմքերնուն ունէին գրաւիչ շպարումներ, ուշագրաւ թարթիչներ եւ իրենց ինքնութիւնը շողող վարսայարդարումներ: խմբապարային գեղեցկօրէն համադրուած շարժուձեւերու, խմբերգներու, սոլիստներու -սոբրանօ, թենոր, պաս- օփերեթիք երգեցողութիւններու եւ նուագախմբային ներդաշնակ կատարողութիւններ՝ նրբօրէն կը համադրուէին յանդուգն եւ բազմահմուտ խմբավար Վաչէ պարսումեանի ճիպոտի անվրիճելի կախարդանքով:

Շար.ը էջ 20

# ԻՇԽԱՆԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ՝ ՄԵՐՏԻՆԵԱՆ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ



Մերտինեան Վարժարանի հոգաբարձութիւնը մեծ հրճուանքով կը հաղորդէ՝ որ Լոս Անճելոսի յայտնի գործարարներէն եւ «Indo European Foods of Glendale» հաստատութեան հիմնադիրներ՝ Տէր եւ Տիկ. Ալպէրթ եւ Թէրի Պէզճեանները վարժարանին նուիրած են մէկ միլիոն տոլար, ($1.000.000):

Իշխանական այս նուիրատուութիւնը պիտի յատկացուի վարժարանի ներկայ շէնքերէն մէկուն վրայ կառուցելու երկրորդ յարկ մը: Շինութեան աւարտին կառոյցը պիտի կոչուի Պէզճեան Շէնք:

Վարժարանիս Հոգաբարձութիւնը իր անսահման երախտագիտութիւնը կը յայտնէ Տէր եւ Տիկ. Պէզճեաններուն՝ խորապէս գնահատելով անոնց հաւատքը հանդէպ Հայ Դպրոցին ընդհանրապէս եւ ի մասնաւորի Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարանին: Նմանօրինակ նուիրատուութեամբ մը Պէզճեան ամոլը կը հաստատէ մանաւանդ իր գնահատանքը Մերտինեան վարժարանի տարած ազգանուէր առաքելութեան, եւ կը հաւատայ անոր փայլուն ապագային:

# ՀԲԸ ՄԻՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏ 2013 ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԻ ԲԱՑՈՒՄԸ ՓԵՏՐՈՒԱՐ 22-ԻՆ

ՀԲԸ Միութեան Փասատինա-Կլենտէյլ Մասնաճիւղը կազմակերպած է Հայկական արուեստի բացառիկ ցուցահանդէս մը: Ժամանակակից Հայկական Արուեստ 2013 ցուցահանդէսը տեղի պիտի ունենայ ՀԲԸ Միութեան Վաչէ եւ Թամար Մանուկեան համալիրէն ներս, Ուրբաթ, Փետրուար 22, Շաբաթ, Փետրուար 23 եւ Կիրակի, Փետրուար 24ին:

Այս ցուցադրութեամբ ՀԲԸՄ-ը կը ձգտի խրախուսել 14 տաղանդաւոր հայ արուեստագէտներ, որոնք



Ֆելիքս Եղիազարեան

*Շահնուրի անունը նոյնացած է իր ստեղծագործած հզօրագոյն երկին՝ «Նահանջը Առանց Երգի» վէպին հետ, ուր գրողը՝ զոյգի մը սիրոյ պատմութեան հետ, վիպական բարձր արուեստի միջոցով, կը միահիւսէ մեր ժողովուրդի արեւմտահայ տարագիր հատուածին վերապահուած տագնապներուն տագնապը –Նահանջը սեփական արմատներէն ու հարազատ ինքնութենէն: Բարեգ նետուած հայ տղոց կեանքի այս վիպական պաստառադրումը կը միտի ախտանշելու՝ անհայրենիք ու աշխարհի երեսին ցրուած ազգի մը բեկորներուն սպառնացող հայակուլ ու հայաջինջ, սպիտակ կամ անարիւն եղեռնը, եւ ահազանգ մըն է ուղղուած համայն սփիւռքահայութեան: Արդարեւ, Պետրոսներու, Սուրէններու, Հրաչներու եւ «լոխում»ներու ապրած կեանքի եղերականութիւնը ընդհանրական է ամբողջ սփիւռքին համար ալ: Եւ Շահնուր կը հաստատագրէ այդ գերագոյն տագնապը՝ անմոռանալի, սիրտ բզքտող տողերով՝ «Նահանջը հոգիներու, գլխու պտոյտ տուող զառիթափին վրայ սա նահանջը կը ջնջէ, կը ձուլէ, կ'անհետացնէ ամէն բան:...Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսա, կը նահանջեն բարք, ըմբռնում, բարոյական, սէր: Կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն: Եւ մենք դեռ կը նահանջենք բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղա', մեղա' Արարատին»:*



*Երկփեղկուած է այս տղոց ճակատագիրը, ինքնութիւնը: Մէկ կողմէ, անոնք՝ անձնատուր օտար կինեւրու, Նենէթներու հրապոյրին ու քմայքին, ընդառաջ կ'երթան օտարացման զառիթափին ի վար: Միւս կողմէ՝ անոնք կ'ապրին անդրադարձի տխուր ու տխրեցնող պահեր, երբ կըզգուան իրենց էութեան խորախորհուրդ ծալքերուն մէջ անթեղուած գայրոյթը.*

*«Ի՞նչ, ի՞նչ, նորէն ֆրանսերէն թերթ, նորէն ֆրանսական թատրոն, ատոնց հայերէնը չկա՞յ: Չպիտի՞ ըլլայ, որ դուք սանկ մէկ մը ցնցուիք, գիտակցիք մեր վիճակին. Չպիտի՞ ըլլայ որ կռուիք, մաքառիք ձուլումին ու այլասերումին դէմ: Մարած մոխիրներ՝ բոլորդ ալ, կաշիի վաճառականներ՝ բոլորդ ալ...: Մենք ալ հայրենիք մը ունինք. Պէտք է պատրաստ կենանք հոն երթալու:...Ուրկէ՞ կրակ պիտի գտնենք երթալու համար կռուի, որովհետեւ, այո՛, կռիւ պիտի ունենանք մենք, որքան ատեն, որ տակաւին ոտքի կաթողիկէ մը ըլլայ եւ ձիւնազարդ գագաթ մը լեռան, որքան ատեն որ մեր երակներուն մէջ արիւնին հետ եռացող «մեր հայրենիք» մը ըլլայ, որքան ատեն որ «մեր հայրենիքը» չըլլայ...»:*

*Գիտակցաբար թէ անգիտակցաբար, այս տղոց հոգիները տակաւին կը ճենճերին հրակէզ կարօտովը՝ «պճեղ մը անոյշ սիրտ»՝ մայրական սիրոյն, իրենց ծննդավայրին, հայրենիքին, մասնաւորաբար հայոց լեզուին, զոր փոխարինել երբեք պիտի չկարենար օտար լեզուն՝ ֆրանսերէնը: Քանզի անոր մէջ չկայ «կարօտ» բառը. «Ֆրանսերէնը գոյութիւն չունի «մա՛յր» բառին, «հա՛յ» բառին, «աքսոր» բառին...ֆրանսերէնը չկա՛յ մեր «գաղթական»ին, մեր «որբ»ին...»:*

*Գերազանցօրէն՝ օտարացման, ուծացումի ազգայնակուլ աղէտին դէմ, մաքառման ոգի հրահրելու համար էր, որ Շահնուր այնքան անողոքօրէն իրապաշտ ոճով, ինչպէս եւ յանդուգն ու խիզախ գրիչով բարձրաձայնեց իր ախտանշումը, մատը դնելով կոտտացող ու արիւնող վէրքին վրայ եւ գրեց առանց ծամծմելու բառերը՝ ուղիղ եւ յստակ: «Նահանջը Առանց Երգի» վէպը կը մնայ, անտարակոյս, ցարդ չգերազանցուած՝ սփիւռքահայ տարագիր ու հայրենազուրկ կեանքի ողջ տագնապն ու ողբերգականութիւնը պատկերող՝ իր գաղափարական միտք բանիով եւ մանաւանդ՝ իր գեղարուեստական ներգործութեան հզօրութեամբ: Այստեղ ընդգծելու ենք, սակայն, որ պարտուողական չէ երբե՛ք ոգին Շահնուրի: Այլ, սրբազան ըմբոստ մըն է ան, որ տակաւին կը հաւատայ լոյսին եւ սիրոյն: «Ցարալէզներու Դաւաճանութիւնը» գրութեան մէջ, ան իր հոգիին աղաղակը կ'ուղղէ Հայոց Անահիտին՝ հոգիէն ժայթքող լուսայորդ պաղատանքով.–*

*«Իջի՛ր կրկին հօտիդ մէջ, փառքդ գեղու հայորդիներուն վրայ, գրաւէ դարձեալ քու թափուր բագինդ: Դի՛ր, դի՛ր լուսապսակդ մեր ցնցոտիներուն շուրջ: Այո, սէրը նուազած է մեր մէջ, բայց չէ ցամքած: Մերի՛ն Անահիտ, շող մը միայն ճաճանչէ, եւ մենք պիտի ցցուինք կրկին անճառելի արշալոյսին մէջ, պիտի յառնենք որպէս թէ համբուրուած ըլլայինք ամենազօր յարալէզներէ...»:*

*Այսօր, Շահան Շահնուրի ծնունդէն հարիւր տասը տարի ետք, ժամանակի անջրպետը տակաւ կը յստակացնէ մեծութիւնը գրական այն երեւոյթին, որ կոչուեցաւ ՇԱՀՆՈՒՐ՝ արժանի մեր եւ յետագայ սերունդներու ջերմ գնահատանքին ու երախտագիտութեան: Խորապէս ազգային ջիղով օժտուած, իրա՛ւ արուեստագէտ–գրողն էր ան, որ իր հզօր երկով ու երկերով մեզ հրաւիրեց խորունկ ինքնաճանաչման, դարձաւ արթնութեան ահազանգ ու զգաստութեան եւ պայքարի կոչ՝ սփիւռքահայ կեանքի՝ բարոյական եւ ազգային աղճատման, ձուլման ու այլասերման, ՆԱՀԱՆՋԻ առաջնորդող ցաւագին իրականութեան դէմ յանդիման...: Ներկայիս, համաշխարհայնացող եւ տակաւ հոգեզրկուող, ազգ ու ինքնութիւն ջնջել սպառնացող մեր ժամանակներուն յատկապէս, այնքա՜ն այժմէական կը հնչեն Շահնուրի ահազանգող եւ զգաստացնող տողերը..., մանաւանդ որ Հայաստանէն արտագաղթը օրէ–օր արիւնաքամ կ'ընէ մեր ժողովուրդը, սպառնալով ազգային մեր անվտանգութեան, մինչ հայրենամերձ հայագաղութները կը դիմագրաւեն նորանոր, կենաց–մահու մարտահրաւէրներ...: Մենք ալ պիտի կրկնէինք Շահնուրի տողերը, գրուած իր «Զոյգ մը Կարմիր Տետրակներ» գրութեան մէջ.–*

*«Իցիւ թէ վերջ գտնէ օտարացման վտանգը եւ ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ գիրքը հիննայ եւ կորսնցնէ գոյութեան ամէն իրաւունք»:*

*ԻՑԻՒ ԹԷ...Իրականութիւնը այլ է սակայն: Այսօր մենք պէտք ունինք նոր Շահնուրներու, որ իրենց գեղարուեստական խօսքի հզօրութեամբ կարենան ահազանգել՝ Հայաստանէն եւ Արարատէն արտագաղթող խուճապահար բազմութիւններու ՆԱՀԱՆՋԸ եւ Հայրենիքի ՀԱՅԱԹԱՓՈՒՄԸ...:*

*Յարգա՜նք եւ պատի՛ւ Շահնուրի մեծ վաստակին:*


ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

# ՅՈՒՇԱՐՁԱՆ

## ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ





Սրտաբուխ նուէրով գիրքէն օրինակ մը ստանալու համար հեռաձայնել՝

**(626) 797-7680** կամ

**(818) 429-2322** թիւերուն

Լաթակազմ, մաքուր տպագրութեամբ, 580 էջերէ բաղկացող գիրքը: Ժողովածուն լոյս ընծայուած է Բենիամին Ժամկոչեանի նախկին սաներուն կողմէ, որպէս երախտիքի տուրք անոր ծննդեան 115 ամեակի առիթով:

Յուշարձան ժողովածուն, նաեւ իր մէջ կ'ամփոփէ իրենց սիրեցեալ տնօրէնին կրթական, մանկավարժական, ազգային-մշակութային, Պէյրութի Սահակեան վարժարանի կէս դարեայ կենսապատումը:

Յուշարձան ժողովածուն կը մատուցէ Բենիամին Ժամկոչեանի ժամանակիցներուն յուշերու ծաղկաքաղը:

**ԿՈՉ ՍԱՀԱԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԱՆ-ՍԱՆՈՒՀԻՆԵՐՈՒՆ**

Բազմավաստակ տնօրէն Բենիամին Ժամկոչեանի սան-սանուհիներէն անոնք որոնք Սահակեան Բարձրագոյն Վարժարանի կապակցութեամբ լուսանկարներ ունին իրենց մօտ, թող բարի ըլլան հեռաձայնել հետեւեալ թիւերուն:

(818) 429-2322 Տիկ. Վարդուհի Գազանճեան

(626) 422-9121 Տիկ. Արուսեակ Գրիգորեան

# ԱՐՄԷՆ ԴԱՐԵԱՆ՝ ՀԱՅ ՏԻՊ ՈՒ ՏԱՌԻ ՀԱՒԱՏԱՒՈՐԸ

ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ



Երբ Արմէն Դարեան անունը կը տրուի, առաջին հերթին մարդոց մտածումին կը ներկայանայ բարեհամբոյր գրողը իր ստեղծագործական արձակ երկերով պատմուածք, վիպակ եւ վէպ:

Մեծ Եղեռնէն հազիւ տաստասնհինգ տարի անց, Սուրիոյ եւ Լիբանանի մէջ հայ գրականութեան փշրուած շղթային նոր օղակը կազմեցին գրողներ, որոնց տրուեցաւ սփիւռքահայ գրող բնութագրումը: Հոս՛ տիրապետող անուն դարձաւ Վահէ-Վահեան-Մուշեղ Իշխան-Անդրանիկ Ծառուկեան եռեակը: Տասնամեակ մը եւ թերեւս ալ քիչ մը աւելի ուշ, հայ գրականութեան ջահը բարձրացուց նոր սերունդ մը՝ Արմէն Դարեանի սերունդը, որ սփիւռքահայ գրականութեան բերաւ պատկառելի վաստակ մը:

Յիշատակուեցան յետ-եղեռնեան սուրիահայ եւ լիբանանահայ գրականութեան առաջին շրջանի եռեակին անունները, որոնք բնորոշուեցան, առաջին հերթին, որպէս բանաստեղծներ: Անոնց յաջորդող սերունդէն արձակ գրականութեան բնագաւառին յուսատու անուններէն եղաւ Արմէն Դարեանը, որ երկու տասնամեակներու ընթացքին հրատարակած պատմուածքներու եւ վիպակներու իր երեք հատորներուն արձակագիրի չքեղ ու ամուր պատուանդան մը ապահովեց իրեն համար: Ինչպէս իր կրտսեր Գառնիկ եղբայրը՝ բանաստեղծութեան մարզին մէջ:

Ոչ-շատ հեռու անցեալին եւ մինչեւ այսօր, մոռացութեան տրուած է այն պարագան, որ Արմէն Դարեանը, պատանութենէն երիտասարդութիւն թեւակոխող տարիներուն, 1941-1942, դարպասեց մուսաները, եւ ծնունդ տուաւ երեք տասնեակ քերթուածներու, որոնցմէ ոմանք ծածկանուններով լոյս տեսած են Վազգէն Այգունիի կողմէ 1939-1944 թուականներուն լոյս ընծայուած «Հայ Գիր» ամսագրին մէջ: Տեղին է յիշել, թէ անոնց հեղինակը՝ այդ քերթուածները, թերեւս չեչտուած գիտակցութեամբ, որակած է ոտանաւորներ: Թող թոյլ տրուի ինծի՝ ըսելու, որ Արմէն Դարեան իր արձակին մէջ շատ աւելի բանաստեղծութիւն դրսեւորած է, քան թէ իր տաղաչափեալ գրութիւններուն մէջ:

Ոմանց համար Դարեանի գրական ստեղծագործութեան ծաւալը կրնայ տպաւորիչ չթուիլ: Նոյնիսկ սեւով ճերմակի վրայ գրուած ալ է. «Ճիշդ է, որ առատ չէ եղած իր գրական ժառանգութիւնը, որպէս տպուած գիրք, սակայն յոյժ բեղմնաւոր եղած են իր գրական-հրապարակագրական յօդուածները...»:

Նախ, ե՞րբ է որ քանակը եղած է չափանիշ՝ որակը հաստատող կամ դրոշմող:

Քիչն ու շատը, գուսպն ու յորդը, սեղմն ու առատը յարաբերական հասկացութիւններ են:

Ապա, դուք դատեցէք. Ալֆոնսը, իր ողջութեան, լոյս ընծայած է երեք հատոր պատմուածք եւ վիպակ. հերթականութիւնը պահելով՝ «Մեր Հացը», «Խարխափէն Հեռու» եւ «Լեռը եւ Տունը»:

Դարեանի մահէն հազիւ տարի մը անց, իր կարգ մը մտերիմ բարեկամներու նախաձեռնութեամբ, լոյսին բարիքը վայելած են երկու հատորներ եւս. «Երկու Եղանակ»ը եւ «Նախագահին Կօշիկները» վէպերը: Մահէն հինգ տարի անց նա՛եւ հրատարակուեցաւ Արմէնին պատմուածքներուն ստուար հատորը՝ «Ջաւակի Մը Համար», ուր տեղ գտած նախորդ հատորներու պատմուածքներուն կողքին, տեղ գրաւած էին հատորներէ դուրս մնացած բազմաթիւ պատմուածքներ: Նշուածներուն վրայ աւելցուցէք Երեւանի մէջ անցեալ տարի լոյս տեսած Դարեանի «Նամականի»ն եւ այս տարեսկիզբին Պէյրութ լոյս ընծայուած «Մատեան Բանաւոր Խօսքի» հատորը. այս երկրորդին մէջ ամփոփուած են ո՛չ ամբողջութիւնը Դարեանի սերտուած ու բծախնդրօրէն ուսումնասիրուած դասախօսութիւնները:

Դեռ կայ աւելին. հայ տիպ ու տառին նուիրուած այս երախտաւորին կը պարտինք Օնորէ տը Պալզագի «Անծանօթ Գլուխ-Գործոցը» վիպակին հայերէնի թարգմանութիւնը եւ հրատարակութիւնը,

1950-ին, կրկին տիպ ու տառի այլ երախտաւորի մը՝ Վահէ-Վահեանի օժանդակութեամբ: Նոյնպէս, Հաննէսեաններու «Շիրակ» հրատարակչատան հրատարակած Կրիմ Եղբայրներու «Մանկական Հէքիաթներ»ը (Յովհ. Թումանեանի հետեւողութեամբ), 1982 թուականին: Աւելցուցէք նաեւ լիբանանցի ֆրանսագիր թատերագիր Ժորժ Շեհատէի «Քէօսէ Քեհիա» օփերէթինը՝ 1971-ին: Վերջին այս երկուքը բեմ ալ բարձրացած են ատենին՝ ժամանակակիցներուս վայելքի հրաշալի պահեր փոխանցելով: Տակաւին չեմ խօսիր

Դարեանի կողմէ կատարուած գրական այն թարգմանութիւններուն մասին,- հայերէնէ արաբերէնի ու ֆրանսերէնի, եւ արաբերէնէ հայերէնի, - որոնք ցրուած են հայ թէ այլ պարբերականներու մէջ:

Թարգմանական գրականութիւնը նա՛եւ ստեղծագործական միտք ու ճիգ կը պահանջէ եւ անբաժան մասնիկը կը կազմէ հեղինակի մը գրական ժառանգութեան:

Յիշե՞մ դեռ Դարեանի այն գրական էջերը, որոնց ծրագրաւորումը ըրած էր, նաեւ անցած էր անոնց գործադրութեան եւ սակայն մնացած էին անաւարտ:

Եթէ պահ մը կանգ առնենք ու փորձենք հանրագումարի բերել ցարդ նշուածները, առանց վարանելու պիտի հաստատենք, որ Արմէն Դարեանի ստեղծագործութիւննե-

Շար.ը էջ 19

# ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

Վերջին ամիսներուն շրջանին մէջ լոյս տեսած են կարգ մը գիրքեր, որոնցմէ քանի մը հեղինակներ իրենց աշխատութենէն օրինակ մը նուիրած են «Մասիս»ին:

## «ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԸ ՈԴԻՍԱԿԱՆԸ»

«Վարդապետի մը Ոդիսականը», Նախկին Հոգեւորական Ոսկան Մխիթարեանի աշխատութիւնն է, որ լոյս տեսած է 2012 թուականին եւ կը բաղկանայ 248 էջերէ: Գիրքին մէջ ամփոփուած են կարգ մը առաքուած եւ ստացած նամակներ, յուշեր, տպաւորութիւններ, որոնց զգալի մասը կապուած են գաղութիս ազգային դպրոցներուն, եկեղեցիներուն: Հետաքրքրական շահեկան գիրք մըն է սոյն հատորը, որը կը վերջանայ գեղեցիկ լոզունգով մը՝ «Արթնցիր ով հայ ժողովուրդ»: Քանի մը տասնեակ առաքուած եւ ստացուած նամակներու ընթերցումով, շրջանիս մէջ ստեղծուած եկեղեցական տագնապին մասին (ասկէ շուրջ 40 տարիներ առաջ) շատ մութ խնդիրներ կը լուսաբանուին:




## «Ո՞ՒՐ Կ'ԵՐԹԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ»

Շնորհակալութեամբ ստացած ենք ծանօթ Սարկաւագ Յակոբ Տէրեանի գրչին պատկանող վերոնշեալ գիրքը 180 էջերով, որուն առաջաբանը գրի առած է Դոկտ. Վաչէ Ղազարեան: Գիրքը լոյս տեսած է հայերէն եւ անգլերէն, ուրտեղ արծարծուած են կարգ մը հարցեր եւ վիճելի խնդիրներ, որոնք կապ ունին Հայց. Առաքելական եկեղեցւոյ հետ: Գիրքին մէջ կան ուշագրաւ հարցեր, վերլուծումներ, ուրտեղ առկայ են հայոց եկեղեցւոյ օրէնքներուն լաւածանօթ հեղինակին տեսակէտները: Հայերէն չգիտցող հայ երիտասարդին համար կարդացուելիք հատոր մըն է, որուն կէս մասը տպագրուած է անգլերէն:




## «ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆ»

Հայ Աւետարանական Ընկերակցութեան դէմքերէն՝ Վերապատուելի Դոկտ. Վահան Յ. Թութիկեանի կողմէ մակագրուած «Ներդաշնակութիւն» հատորը 160 էջերէ բաղկացած ստացանք շնորհակալութեամբ: Գիրքը լոյս տեսած է 2013 թուին, չքեղ կազմով եւ ճաշակաւոր տպագրութեամբ:

Աշխատութեան 118 էջերը անգլերէն, իսկ մնացեալը հայերէն տպուած է: Հայերէն բաժինի յառաջաբանին մէջ հեղինակը կը գրէ՝ «Ներդաշնակութիւն» կոչած եմ երկլեզուեան սոյն գիրքին հայերէն բաժինը, այն բաղձանքով, որ մեր հաւաքական եւ ազգային կեանքին մէջ ապագայ երջանիկ օր մը կարելի պիտի ըլլայ ներդաշնակութիւն ստեղծել»: Գիրքին մէջ հայ դատին եւ քանի մը պատմական երեւոյթներու մասին կարծիքներ կան, որոնք




այժմէական են եւ կարեւոր: Վերապատուելի Դոկտ. Թութիկեան քանի մը արժէքաւոր գիրքերու հեղինակ է:



# «ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՌԱԶՄԻԿ ՓԱՆՈՍԵԱՆԸ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏՆՕՐԷՆ



*ԼԻԶՊՈՆ - «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութիւնը յայտարարած է Դոկտ. Ռազմիկ Փանոսեանի նշանակումը որպէս Հայկական Համայնքներու բաժանմունքի տնօրէն Լիզպոնի մէջ: Ան պիտի ստանձնէ իր պաշտօնը 1 Փետրուար 2013ին:*

*Փանոսեան իր դոկտորական աւարտաճառը պաշտպանած է Լոնտոնի Տնտեսութեան եւ Քաղաքական Գիտութեան Դպրոցին մէջ* (London School of Economics and Political Science), *ուր նաեւ դասաւանդած է: Բազմաթիւ հրատարակութիւններ ունի հայկական նիւթերու վերաբերեալ, ինչպէս նաեւ հայ ազգային ինքնութեան նուիրուած ու մասնագիտական ջերմ գնահատականի արժանացած հատոր մը: Ան լայն փորձառութիւն կուտակած է աւագ կառավարման մէջ, ներառեալ՝ բազմամիլիոն տոլարնոց ծրագիրներու եւ միջազգային զարգացման նպաստներու* (grants) *պարագային: Երկար տարիներ ծառայած է որպէս Քաղաքականութեան, Ծրագիրներու եւ Ծրագրումի տնօրէն՝ Մոնթրէալ գտնուող գանատական կառավարական կազմակերպութեան մը: Աշխատած է Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Զարգացման Ծրագրին համար: Կը խօսի անգլերէն, ֆրանսերէն եւ հայերէն:*

*«Կ՛ընդունիմ այս պաշտօնը խայտանքով ու խոնարհութեամբ», ըսաւ Փանոսեան: «Ասիկա Սփիւռքի ամէնէն կարեւոր պաշտօններէն մէկն է: Պատրաստ եմ շարունակելու իմ նախորդներուս աշխատանքը եւ ա՞լ աւելի ամրացնել ու ընդարձակել «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան գործը՝ կեդրոնացած ու համակարգուած ձեւով, աշխարհասփիւռ հայ համայնքներուն հետ»:*

*Մարթին Եսայեան՝ Հայկական Համայնքներու բաժանմունքին պատասխանատու հոգաբարձու եւ Հիմնարկութեան հիմնադիր Գալուստ Կիւլպէնկեանի թոռնորդին, ըսաւ. «Մեծ գոհունակութիւն կը պատճառէ ինծի, որ Դոկտ. Փանոսեանը Հայկական Համայնքներու բաժանմունքին տնօրէնը նշանակուած է: Ան բացառիկ փորձառութեամբ կու գայ այս պաշտօնին եւ մեզի կը բերէ անհրաժեշտ միջազգային ու համադրական հեռանկար: Նշանակումը հետեւած է միջազգային փնտռտուքի մը, որուն ընթացքին բազմաթիւ արժանի թեկնածուներ ընդգրկուած էին»:*

# ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԷՆ ՆԵՐՍ

**ՆԱՅԻՐԻ ՇՈՐՃԵԱՆ**

### Ընկերային Յարաբերութիւններ

*Կարգ մը հոգեբաններու համաձայն, մեր զգացումները եւ մտածումները յաճախ կ՛արտացոլացնենք մեր ընկերներուն վրայ՝ առանց անդրադառնալու, որ անոնք կը պատկանին մեզի: Այլ խօսքով, մեր ընտրած ընկերները կը ներկայացնեն մեր ինքնութիւնը եւ ներքին աշխարհը:*

*Այս պատճառով, երբեմն մեր հարցերը անջատելով մեզմէ կը զետեղենք մեր ընկերներուն մէջ, մեր յարաբերութեան միջոցով: Երբեմն մեր սխալները անգիտակցաբար կը զետեղենք մեր ընկերներուն մէջ եւ կը սկսինք նեղանալ անոնցմէ:*

*Երբ հարց մը ունենանք ընկերոջ մը հետ, լաւ կ՛ըլլայ որ քննենք զայն եւ հարց տանք, թէ արդեօք այս նոյն հարցը ունեցա՞ծ ենք այլ ընկերոջ մը հետ: Եթէ այդպէս է պարագան, որ ընդհանրապէս նոյն հարցերը կը դիմագրաւենք մեր բոլոր ընկերներուն հետ, ուրեմն շատ հաւանական է, որ մենք մեծ բաժին ունին հարցի նախաձեռնութեան մէջ:*

### Ծնողներու Հետ Յարաբերութիւն

*Ջափահաս դառնալէ ետք եւս կը շարունակուին ծնողներու եւ զաւակներու միջեւ բախումները, վէճերը, թիւրիմացութիւնները եւ խնդիրները: Թելադրելի է, որ միշտ ժամանակ անցընենք մեր ծնողներուն հետ եւ այս ժամանակը դարձնենք որակաւոր: Միշտ հարցնենք ծնողներու կծիքը հարցերու նկատմամբ, այս ձեւով աւելի լաւ կը ծանօթանանք իրենց եւ կրնանք կանխարգիլել վէճեր եւ հարցեր: Կարեւոր է ի մտի ունենալ, թէ որքան ալ մեծնանք, միշտ պէտք է զգոյշ ըլլանք մեր ծնողներուն հետ խօսած ժամանակ:*

*Յարգանքը եւ քաղաքավարութիւնը միշտ ներկայ պէտք է ըլլան, որովհետեւ ծնողները այս բոլորը կ՛ակընկալեն մեզմէ:*

### Զաւակներու Հետ Յարաբերութիւն

*Բոլոր ծնողները կը փափաքին, որ իրենց զաւակները ըլլան գիտակից, պարտաճանաչ եւ պատասխանատու: Սակայն, փոքրիկները կը նեղանան երբ իրենց ծնողները պատասխանատուութիւն մը յանձնեն իրենց, որովհետեւ այս պատասխանատուութիւնները յաճախ կը փոխանցուին հրամայական ոճով: Թելադրելի է, որ հրամայելու փոխարէն, ծնողները իրենց զաւակներուն տան որոշում առնելու իրաւասութիւնը եւ պատասխանատուութիւն ստանձնելու գիտակցութիւնը: Ամենէն պարզ օրինակով, փոխանակ հրամայելու որ սենեակը կոկիկ պահէ, կարելի է հարց տալ փոքրիկին, թէ ի՞նչ կ՛ընէր ան երբ ինք ըլլար ծնողը եւ իր զաւակը տակնուվրայ ընէր սենեակը: Այս պարագային փոքրիկը կը սկսի մտածել լուծումներու մասին եւ վերջապէս կ՛ընտրէ այն, որ ամէնէն շատ տրամաբանական կը թուի իրեն համար: Երբ լուծում մը տրամաբանական ըլլայ փոքրիկի մը համար, ան անպայման կ՛իրագործէ զայն:*

# ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻՒ

*Շաբաթ, Յունուար 19, 2013ին, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Մոնթեպէլլոյի Հայոց Նահատակաց Յուշարձանին առջեւ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն կատարողութեամբ հոգեւորականներ՝ Արժ. Տ. Յարութիւն Քհնյ. Թաշճեանին որ կը ներկայացնէր Արեւմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանը, Արժ. Տ. Աշոտ Քհնյ. Գամպուրեանին, Վերապատուելի Յովսէփ Մաթոսեանին, Արժ. Տ. Արշակ Ա. Քհնյ. Խաչատուրեանին: Իսկ խօսք առին Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի ատենապետ եւ Միութեան հոգաբարձու՝ Տոքթ. Յովհաննէս Գ. Աւետիքեան, Գործադիր Մարմնի վարչութեան ատենապետ՝ Գուրգէն Պէրքչանլար եւ* The Armenian Observer *շաբաթաթերթի տէր եւ տնօրէն՝ Փրոֆ. Օշին Քէշիշեան: Ներկայ էին Պոլսահայ Միութեան Հոգաբարձութեան եւ միութեան անդամներ ու համակիրներ որոնք ծաղկեպսակ զետեղեցին ի յիշատակ Հրանդ Տինքին հոգւոյն:*

# ՄՈՄԱՎԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՍԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՈՂԲԱՑԵԱԼ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

**ՄԱՐԻԷԹ ՄԻՆԱՍԵԱՆ-ՕՀԱՆԷՍ**

*Գիշերը յստակ եւ մեղմ էր: Վշտի արտայայտութիւնները զգալի էին եւ մրմունջները կը խզէին սրահին լռութիւնը, իսկ մոմերուն բոցերը կը լուսաւորէին մթութիւնը, որոնց ընդմէջէն ներկաներուն մտածումներն ու աղօթքները կ՛ուղղուէին ողբացեալ Հրանդ Տինքին:*

*Այս էր տեսարանը Շաբաթ գիշեր, Յունուար 19, 2013ին, Պոլսահայ Միութեան «Հրանդ Տինք» սրահին մէջ, ուր հաւաքուած էին միութեան անդամներ ու համակիրներ, մոմավառութեան եւ հսկումի արարողութեան, հանգուցեալ Հրանդ Տինքի յիշատակին: Բացման խօսքը կատարեց օրուան խօսնակ՝ Միութեան Մշակութային Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան, որ բոլորը հրաւիրեց վայրկեան մը յոտնկայս յարգանքի տուրք մատուցանելու հանգուցեալին հոգւոյն: Ապա հրաւիրեց Ս. Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Յարութիւն Քհնյ. Թաշճեանը, որ կը ներկայացնէր Արեւմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանը, որպէսզի կատարէ Հոգեհանգստեան արարողութիւնը: Տէրունական աղօթքէն եւ հոգեհանգստեան պաշտօնէն ետք, Քահանայ հայրը արտայայտուեցաւ ըսելով. «Զգացուած ենք եւ մեր հոգիներուն մէջ մեր աղօթքը կը բարձրացնենք առ Աստուած Հրանդ Տինքի հոգւոյն ի հանգիստ: Ան եղաւ սպիտակ աղաւնին որուն խորհրդանիշը պայծառացած է բոլորիս սրտերուն մէջ: Հրանդին արդարութեան ձայնը Աստուծոյ խաղաղութեան մէջ կը ճախրէ եւ իր արդար վարձատրութիւնը կը ստանայ եւ այդ աղաղակող ձայնը մեր սրտերուն մէջ կը բաբախէ»:*

*Ապա Տոքթ. Աւետիքեան արտայայտուեցաւ թէ Հրանդ Տինքի անգութ եւ անարգ սպանութիւնը հետեւանք էր Թուրք իշխանութիւններու կողմէ կատարուած ճնշումներուն, մի անգամ ընդ միշտ լռել տալու Տինքի արդար դիրքորոշումը Հայոց Ցեղասպանութեան հանդէպ, պահանջելով անոնցմէ ընդունիլ պատմական այս ճշմարտութիւնը: Ապա իր շնորհակալութեան խօսքերը արտայայտեց ձեռնարկին յաջողութեան բոլոր մասնակիցներուն, ապա հրաւիրեց Միութեան Գործադիր Մարմնի վարչութեան ատենապետ՝ Տիար Գուրգէն Պէրքչանլարը:*

*Տիար Պէրքչանլար բացատրեց, թէ Հրանդ Տինքի մահուան օրը նոր սկիզբ մը իմաստ առաւ ոչ թէ իբրեւ վերջակէտ, այլ՝ որովհետեւ այդ դժբախտ օրը պատճառ դարձաւ Թուրքիոյ սահմաններէն ներս ապրող ժողովուրդին պոռթկումին, հարց տալով՝ ինչո՞ւ: Արդեօք ինչո՞ւ համար Հրանդին դէմ այս ահաբեկչական կապարը ուղղուած էր: Ի՞նչ պատահած էր 1915ին: Հրանդ ինչ բանի համար պայքար կը մղէր, որ նախընտրուեցաւ անոր անձայնացնել իր դէմ մահափորձ ուղղելով: Ան, բաղդատմամբ Սփիւռքի մէջ գտնուող Հայոց Ցեղասպանութեան մտաւորականներէն տարբեր ըլլալով, եղած էր ծանօթ ըմբոստ անձ մը Թուրքիոյ մէջ ապրող փոքրամասնութեանց կողմէ: Իր այդ ըմբոստութիւնը դուրս տուած էր հայ ժողովուրդին դէմ եղած անիրաւութեանց նկատմամբ, սակայն միշտ ուշադիր ըլլալով որ իր գրութիւնները որեւէ կերպով Թուրք ժողովուրդին անարգանքի ձեւով չ՛ընդունուին եւ անոնց զգացումները չվիրաւորուին:*

*Այդ պատճառով էր, որ իր պայքարը տարբեր տեղ մը գրաւած էր ժողովուրդին սրտերուն մէջ: 100,000 անձեր երբ կը քալէին իր յուղարկաւորութեան թափօրին ետեւէն, Թրքերէնով կը պոռային. «Բոլորս հայ ենք, բոլորս Հրանդ ենք» ցուցաբերելով իրենց գաղափարային մերձեցումը, հանդէպ Հրանդ Տինքին կեանքին ընթացքին մղած պայքարին:*

*Տիար Պէրքչանլար ըսաւ. «Այն փամփուշտը որ Հրանդ Տինքը սպաննեց, այդ օր ժողովուրդին զարթնումի սկսելու օրը եղաւ»: Ատենապետը շեշտեց, թէ իբրեւ հայ ժողովուրդ, այն յարաբերութիւնները որ ունինք Թուրք մեծերուն հետ, եթէ անոնց հետ համաձայն գործակցութիւն մը իրականացնենք, Հայոց Ցեղասպանութիւնը ընդունելու արդարութեան ինքնաճանաչման գծով Թուրք ժողովուրդին կողմէ, մեր այս աշխատանքին արդիւնքը աւելի կ՛արագանայ»:*

*Հրաւիրուեցաւ երգչուհի Լուսիա Մունը (Պապաեանց), որուն հակիրճ կենսագրականին ընթերցումէն ետք ան յայտնեց թէ ծարաւն ունէր տարբեր մշակոյթներուն մասին գիտնալու եւ իր երգած երգին մասին կարգ մը բացատրութիւններ տալէ ետք ընթերցեց ինքնագիր ոտանաւոր մը «Մենք ցրուած ենք, սակայն միացած ենք» խորագրով որ ինքնին պատգամ մըն էր Թուրք երիտասարդներուն: Յուցադրուեցաւ Տէր Զօր անուն երգը իր երգեցողու-*

*Շար.ը էջ 18*

# ՄՇՈՅ ԴԱՇՏ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Արդէն յոգնե՛լ ենք մենք այս անիմաստ բախտից.
Դու մինչեւ երբ, Արա՛, մանուկ մնաս,-
Եւ մինչեւ ե՞րբ - այսպէս - մահո՛վ յաղթես...
Լաւ է՝ նաշից էլ քո չբարձրանաս,
Որ պայքարի ելնեն առաջնորդներ պարթեւ-
Որ մեռնելով՝ պարտուեն, կամ ապրելով՝ յաղթեն...

Եղիշէ Չարենց

ԳԷՈՐԳ ԱՍԱՏՐԵԱՆ

Զգիտեմ՝ ո՞վ, ե՞րբ առաջինը իմաստային տարբերութիւն գտաւ «էրգիր» եւ «երկիր» հասկացութիւնների միջեւ եւ ոգեղէնութիւն, հպարտութիւն, վեհութիւն տեսաւ, աւաղ, միայն առաջինի մէջ: Եւ կամ երբ Վանի՞ց սկսեցին ազնիւ հայրենասէրի աչքերի մէջ «էրգրի կարօտ» միայն տեսնել, բայց ոչ երբեք այս իրական ու ներկայ երկրում ապրողի, արարողի տենչ եւ ձգտում, այսինքն՝ այն Հայաստանի, որն ամենօրեայ, ամենժամեայ սիրոյ ու գորովանքի կարիք ունի...

Զգիտեմ՝ ինչո՞ւ ենք մեր ուրախութիւնը եւ հպարտութիւնը միայն անցեալի, կորուսեալի մէջ ենք տեսնում եւ փնտռում...

Ամէն անգամ սիրտս ճմլւում, ցաւում է մեր այս փոքրիկ Հայաստանի համար, երբ ոմանք անթաքոյց հպարտութեամբ նետում են՝ «Չէ՛, ինչ ես ասում, ես ծնուել եմ Գիւմրիում, բայց մերոնք էրգրումից են», կամ՝ «Նա Երեւանում է ծնուել, բայց նախնիները... Կարսից են», կամ էլ՝ «Ես Ապարանում եմ ծնուել, բայց մերոնք Մուշից են գաղթել»: Ես հասկանում եմ նրանց է՛ւ ցաւը, է՛ւ հպարտութիւնը, որոնք հաւասարաչափ նաեւ իմն են, բայց միեւնոյն է, նման պահերին սիրտս ցաւում է Գիւմրու, Երեւանի, Ապարանի համար: Ինչո՞ւ, ինչի՞ համար ենք այսպէս անփութօրէն, յաճախ նոյնիսկ ցուցադրաբար, այսպէս հեշտ ու հանգիստ մեզ օտարում, զատում այս հայրենիքից:

Նման պահերին ուզում եմ հարցնել. «Սպասէ՛ք, սպասէ՛ք տղե՛րք, եթէ մենք՝ բոլորս, մեր բոլորի նախնիները էն կողմերից են, բա ո՞վ է ապրել էս Հայաստանում: Մի՞թէ ճիշտ է մեր թշնամին, երբ ասում է...»:

Չեմ հասկանում. ի՞նչ է, ամօ՞թ է Երեւանում, Ապարանում, Աշտարակում, Գիւմրիում, Վանաձորում... չգիտեմ՝ այս Հայաստանի որեւէ գիւղում ծնուած լինելով կամ արմատ ունենալով ինչո՞ւ ենք այսպէս խուսափում, ինքներս մեզ զատում, օտարում այս հողից: Իբրեւ թէ՝ տեսէ՛ք, ես Երեւանում եմ ծնուել, բայց չկարծէք՝ բոյ- բուս չունեմ, քոլի՞ տակից եմ դուրս եկել, ո՛չ, նախնինե՛րս...

Այսպէս կամ մօտաւորապէս այսպէս:

Եւ սիրտս ցաւում է այս վերաբերմունքի համար, առ այս՝ թող որ փոքրիկ, թող որ մեր պատմական հայրենիքի ընդամէնը մէկ տասներորդ մասը կազմող Հայաստանի համար սիրտ ցաւեցնենք: Այո՛, ընդամէնը մէկ տասներորդը, բայց շօշափելի, առարկայական, ներկայ, շնչող, ապրող...

Ինչո՞ւ ենք փախչում այս իրական Հայաստանից (դիտմամբ չեմ օգտագործում ազատ ու անկախ բառերը) եւ մեր չիրականացած երազանքները փնտռում կորուսեալի մէջ: Եւ մինչեւ ե՞րբ ենք այսպէս թեթեւօրէն անտեսելու մեր ոտքի տակի հողը, երկիրը, հայրենիքը եւ մեր հայրենասիրական բաղձանքների իրականացումը տեսնելու միայն «էրգրի» մովերում: Թող այս խօսքերը չտխրեցնեն թունդ ու մաքրարիւն հայրենասէրներին. քաւ լիցի, անցեալը մոռանալու քարոզ չեմ կարդում, այլ ընդամէնը՝ ներկան սիրելու... Որովհետեւ միայն յիմարը, կատարեալ յիմարը չի հասկանայ, թէ ինչ ասել է կորուսեալ հայրենիք, հայրենական տուն, բաղձանք, հոգեւոր կապ անցեալի յիշողութիւնների հետ, կորստի ցաւ, կսկիծ, միայն խելագարը ականջները կը խցի նախնեաց կանչը չլսելու համար, եթէ, ի հարկէ, խցելը կ՚օգնի, բայց...

Ինչո՞ւ ենք թիկնադարձ կանգնում Արագածին ու էլի հիանում միայն Արարատի բիբլիական վեհութեամբ: Իսկ ո՞վ, խնդրում եմ ասէք, ո՞վ պէտք է տեսնի Արագածի կատարին վառուող Լուսաւորչի անմար կանթեղը, որ դար ու դարեր մեր «մթնած կէս գիշերներին» լուսաւորել է մեր ժողովրդի անցնելիք ճանապարհը: Ինչո՞ւ ենք իրական հայրենիքը փայփայելու փոխարէն, մեր սիրտը տաքացնում կորցրածի տեսլականով, տեսիլքով: Արդեօ՞ք ոչ այն պատճառով, որ մեր կորուսեալ հայրենիքը այսօր մեզնից ոչինչ չի պահանջում, իսկ այս մէկը՝ ապրող-շնչողը, ամենօրեայ նուիրում, օրն ի բուն եւ քրտնաջան աշխատանք, այսինքն՝ հաց ու ջուր...

Ինչ խօսք, չափազանց հեշտ է երազային հայրենիք սիրելը:

Դաժան խօսքեր եմ ասում, բայց, աւաղ, ճշմարիտ, մանաւանդ՝ անհրաժեշտ: Դառը դեղահաբ է, բայց պարտաւոր ենք կուլ տալ, եթէ ուզում ենք առողջանալ:

Չէ՛, քի՛չ, շատ քիչ ենք սիրում այս իրական հայրենիքը:

Եթէ մենք այսօր այս հայրենիքում վատ ենք ապրում, ապա միայն ու միայն սիրոյ պակասից: Վատ ենք ապրում, որովհետեւ չենք դողում այս մի կտոր հողի, այս հայրենիքի համար, ինչպէս չենք դողում հենց այնպէս՝ էժան ձեռքն ընկածի վրայ:

Սիրոյ պակասից չէ՞, որ հիմա էլ ազգովի՝ վարորդ ու մտաւորական, գործազուրկ ու գործատու, աղքատ ու հարուստ հեշտօրէն լքում, ո՛չ, փախչո՜ւմ, ճողոպրո՜ւմ ենք մեր տուն ու տեղից, հայրենի եզերքից եւ ապաստան փնտռում ուր ասես, միայն թէ՝ այս տեղից հեռու: Ուրեմն՝ ինչպէ՞ս հաւատանք այն խօսքերին, որ դար ու դարեր երազել ենք անկախ ու ազատ հայրենիք ունենալու մասին, հիմա, երբ այդ երազանքը իրականութիւն է, ինչո՞ւ ենք այսպէս հեշտ ու հանգիստ հրաժարւում այնքան տառապանքով ձեռք բերուածից: Սիրոյ պակասից չէ՞, որ այս էլ երկու տասնամեակ՝ յամառօրէն չենք կարողանում ստեղծել այն հայրենիքը, որտեղ երջանիկ կը լինի ամէն հայազգի, խնդութեամբ կ՚ապրեն մեր երեխաները, թոռները: Իսկ սիրել նշանակում է՝ մնալ ու ճակա՛տ կոտրել, չընկրկել չարի ու վատի առաջ, մնալ ու պայքարել ստի ու կեղծիքի, անարդարութիւնների ու անօրինութիւնների դէմ:

Ումի՞ց դժգոհենք, երբ իշխանութիւնը մե՛նք ենք, պետութիւնը մե՛նք ենք, երկիրը մե՛նք ենք, վերեւում նստածն էլ ենք մենք, ներքեւում ընկածն էլ, եւ դարձեալ ու դարձեալ մենք ենք, հե՛նց մենք՝ հարստահարողն ու հարստահարուողը, օրէնսդիրն ու անօրինականութեան զոհը, ընտրողն ու ընտրուողը, սելն էլ, սելուորն էլ, թալանողն ու լափողն էլ, լլկուողն էլ...

Եթէ մենք գնում ենք, եթէ, մանաւանդ, բացակայ ենք հոգով, ա՛յս երկրում ու ա՛յս երկրի հետ չենք, ապա ո՞վ պէտք է գայ ու մեր փոխարէն թացը չորից զատի, յարդը՝ ցորենից, ու այս դառը հայրենիքը դարձնի՝ Երկիր Աւետեա՜ց, ու երկու ձեռքով մեզ տայ ու ասի՝ խնդրեմ, հայ օրհնեալ ժողովուրդ, վայելի՛ր, դու շա՜տ տառապանքներ ես կրել:

Եւ մի բան էլ. քանի դեռ Հայաստանում անխաչ կը մնայ թէկուզ մէկ եկեղեցու, մատուռի գմբէթ՝ մենք բարոյական իրաւունք չունենք ուրիշից, օտարից, թշնամուց հակառակը պահանջել, քանի դեռ Հայաստան աշխարհում անտէրութիւնից կը շարունակեն քանդուել մեր հնագոյն եկեղեցիների, յուշարձանների պատերը՝ մենք բարոյական իրաւունք չունենք ողբալու մզկիթի վերածուած մեր տաճարների համար, քանի դեռ Քրիստոսապատկեր ու խաչապատկեր քարերը գլխիվայր շարուած կը մնան թէկուզեւ մէկ եկեղեցում՝ բարոյական իրաւունք չունենք դառն աղի արցունք թափելու հայկական յուշարձանի այն սրբատաշ քարի համար, որ քուրդն օգտագործել է իր տան պատի մէջ: Մի՞թէ իսկապէս մեր չափը չափազանցն է:

Հայրենիքը գովերգելու, սեփական ժողովրդին փառաբանելու (շատ յաճախ՝ հաճոյանալու, չամաչենք՝ քծնելու) ե՛ս, դո՛ւք, մենք բոլորս շա՜տ խօսքեր գիտենք՝ թէ՛ արձակ, թէ՛ յանգաւոր, բայց, ընդունե՛նք, դրանք վաղուց արդէն ուժը կորցրած են, կախարդանքից զրկուած՝ շատ ու անտեղի օգտագործելուց: Իսկ մեզ հիմա ոչ թէ գեղեցիկ, այլ անկեղծ խօսքեր են պէտք:

Եւ գլխաւորը՝ մենք իրաւունք չունենք պատրանքներով ապրել եւ պատրանքներով սնուել:

Մենք երազն ու իրականութիւնը միմեանց հետ շփոթելու իրաւունք չունենք:

Մենք իրաւունք չունենք կրկնել մեր պատմութեան սխալները եւ մեր երկիրն ու ժողովրդին մէկ անգամ էլ պարզելու «սրերին սուր սայր»...

Ես չեմ տեսել Մշոյ դաշտը, բայց հաւատում եմ, որ դրախտավայր է: Բայց եւ ընդունենք, որ Մշոյ դաշտ տանող ճանապարհը կարող է անցնել միայն, միմիայն Արարատեան դաշտի բարդիների միջով:

Եւ դարձեալ, քանի դեռ Արարատեան դաշտում անմշակ կը մնայ թէկուզ մի թիզ հող (իսկ անմշակ հողատարածքներն այսօր արդէն հազարաւոր հեկտարների են հասնում), քանի դեռ կը շարունակուի Արարատեան դաշտի անապատացումը (իսկ բնապահպանները վաղուց են ահազանգում այդ մասին), մեր յիշողութեան մէջ գնալով կը խամրի Մշոյ դաշտի չքնաղ, դրախտային պատկերը:

Եթէ ուզում ենք յաղթել, եթէ ուզում ենք յարատեւել, եթէ ուզում ենք գալիքի աչքերին անահ նայել, ապա պէտք է հայրենիքում ծնուած լինելն ու հայրենիքում ապրելը աստուածային պարգեւ, երջանկութիւն համարենք: Եւ պէտք է յիշենք ու մեր ականջներին օղ անենք. «Հաւատն առ այն, որ ժողովրդի յարատեւութիւնն ու անմահութիւնը երաշխաւորուած են ի վերուստ՝ պարզամիտ պատրանք է եւ մոլորութիւն: Պատմութիւնը դաժանութիւններով լի թատերաբեմ է, որը բազում ժողովուրդներ՝ որպէս անկախ հանրոյթներ, լքել են վաղուց: Պատմութեան թատերաբեմում լինելը դեռեւս իրաւունք չի տալիս ապրել այնպէս, ինչպէս խելքիդ փչի... Հետեւաբար, անհրաժեշտ է, որ մեր սերունդը խոր գիտակցումով հոգայ ու պայքարի ազգի ապագայի համար»:

Այս խօսքերի հեղինակը սպանացի նշանաւոր սոցիոլոգ ու փիլիսոփայ Խոսէ Օրտեգա-ի-Գասետն է: Եթէ սպանացին է մեր ժամանակներում տագնապում իր ազգի ապագայի համար...

Համոզուած եմ, որ մի օր մեր համազգային շուրջպարը Արարատի շուրջն ենք բռնելու, բայց, նախ, պէտք է մեր քոչարին այս փոքրիկ հայրենիքի գագաթների (թող որ Մասիսից անհամեմատ ցածր) շուրջը պարենք:

Սիրե՛նք մեր Հայրենիքը՝ միա՛կը, սիրե՛նք մեր այս փոքրիկ Հայաստանը:

# ԱՇԽՈՒԺՈՒԹԻՒՆ ՊԱՐԳԵՒՈՂ ԸՄՊԵԼԻՔՆԵՐԸ ՎՆԱՍԱԿԱՐ ԵՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

Ամերիկեան հիւանդանոցները կը յայտնեն, որ շատցած է այն հիւանդներուն թիւը, որոնց մօտ կը նկատուի աշխուժութիւն պարգեւող ըմպելիքներով թունաւորուելու նախանշաններ: Բժիշկները կը հաստատեն, որ ըմպելիքները այդքան ալ անվտանգ չեն, ինչպէս կը ներկայացնեն արտադրողները:

Ըստ Միացեալ Նահանգներու Թմրա-հոգեբանական ծառայութիւններու տուեալներուն,

2007-2011 թուականներուն արձանագրուած է հիւանդանոց դիմելու 10-20 հազար դէպքեր: Հիւանդներու կէսէն աւելին դեռահասներ կամ երիտասարդներ են, որոնց մեծ մասը պարբերաբար այս տեսակի ըմպելիքներ կ՚օգտա- գործէ:

Աշխուժութիւն պարգեւող ըմպելիք արտադրող ընկերութիւնները կը նշեն, որ իրենց ապրանքները ամբողջովին անվնաս են, սակայն բժիշկները հակառակը կը փաստեն՝ նշելով

Բազմաթիւ հիւանդութիւններ, որոնք կը յառաջանան այս ըմպելիքները օգտագործելու պարագային: Անոնց շարքին են անքնութիւնը, ջղային պրկումները, գլխացաւերը եւ շարք մը այլ հիւանդութիւններ:

massispost.com
daily news updates

## ԵՐԳԵԼԸ՝ ԴԵՌ ԿԱՏԱՐԵԼ ՉԷ...

*Շարունակուած էջ 13-էն*

*լինես Նշանեան-դերասանուհու խաղին, չես դժուարանայ հասկանալ գեղջուկ Անուշի հոգեկան ապրումները, անմուրազ սիրուց տառապող աղջկայ հոգու տուայտանքները: Այստեղ է, որ մտածում ես, թէ որքա՜ն հիանալի դերասանուհի կարող էր լինել Աննա Նշանեանը:*

*Անուշի դերերգը լուրջ փորձաքար է ամէն մի տաղանդաւոր երգչուհու համար: Այդ փորձաքարում միացել են իրար Անուշն ու Աննան, դարձել մի մարմին, որի շնորհիւ էլ այդ կերպարը Աննայի մօտ ձեռք է բերել զգացմունքային ճոխութեամբ, ծիրանագոյն երանգներով մի մարմին, որը ոչ մի քիմիական նիւթ չի կարող տարրալուծել ու առանձնացնել մէկը միւսից: Մէկ ամբողջութիւն են այդ երկուսը:*

*Սարոյի անկրկնելի դերակատար Աւագ Պետրոսեանը՝ ահա թէ ինչպէս է արժեւորել Աննա Նշանեանին. «Աննա Նշանեանի Անուշը տարբերւում է բոլորից: Աննայի Անուշը առաւել յուզական էր: Բոլորից գեղեցիկը եւ արտայայտիչը»:*

*Նմանատիպ կարծիք է յայտնել նաեւ Մօսիի դերակատար Դաւիթ Պօղոսեանը. «...Շատ Անուշներ են եղել, սակայն Աննայի Անուշը անզուգական էր ու գերազանցում էր միւսներին: Նրա արտաքին գեղեցկութիւնը, անկաշկանդ երգն ու կերպարայնութիւնը գրաւում էին ունկնդրին ու հիացնում»:*

*...Ժամանակները փոխուեցին, եկան դժուարին ուԹսունական Թուականները, փոխուեցին նաեւ մարդկային փոխյարաբերութիւնները: Ինչպէս բազմաթիւ մտաւորականներ ու արուեստագէտներ, այնպէս էլ Աննա Նշանեանը ընտանիքի հետ մէկտեղ արտագաղթեց Միացեալ Նահանգներ: Մինչ Լոս Անճելոս մեկնելը նա վերջին անգամ գնացել է օպերային թատրոն, ինչպէս ինքն է ասում «Երգը յուշերում» փայլուն հրատարակութեամբ տաս տարի առաջ լոյս տեսած շքեղ գիրք-ալպոմում, «Տունկի եկայ ու համբուրեցի բեմի յատակը: Խաչակնքեցի եւ... եւ իմ երգը թաղեցի իմ սեփական հայրենի բեմում...»:*

*Աննա Ջան, սիրելի բարեկամ, ես եւ բազում արտագաղթած արուեստագէտներ էլ են թաղել իրենց արուեստը հայրենի բեմերի վրայ, որպէսզի հայրենի արուեստը կրկին ծաղկեցնեն, այս անգամ արդէն օտար բեմահարթակներում...:*

*Եւ դու քաջաբար դիմագրաւեցիր բոլոր դժուարութիւնները, նոյնիսկ ուԹսունականների համար բնորոշ անտարբերութիւնը Սփիւռքի մեր հայրենակիցների կողմից: Ես էլ եմ ճաշակել այդ «համեղ» պտուղները: Այդ յետոյ էր որ, երբ շատացան «հայաստանցիները» պատկերը փոխուեց: Դու դարձեալ մտար քո ասպարէզի մէջ: Բացի տեղական համերգներից, դու փառայեղ ելոյթներ ունեցար Ամերիկայի ողջ տարածքին, ինչպէս նաեւ Սփիւռքի հայաշատ վայրերում, հասնելով Գանատա, Անգլիա, Աւստրալիա:*

*Քո համերգների ծրագրերում տեղ գտան սփիւռքահայ բոլոր կոմպոզիտորների երգերն ու ռոմանսները, ռուսական եւ արեւմտաեւրոպական կոմպոզիտորների գործերը, արիաներ՝ բոլոր հայկական եւ արեւմտաեւրոպական օպերաներից:*

*Դու, ի հարկէ մշտապէս կատարեցիր քո ամենասիրած «Անուշի խելագարութեան տեսարանը»՝ երբեք մտահոգուած չլինելով, որ իննը րոպէանոց այդ գործը կարող է ձանձրալի լինել ունկնդիրների, մանաւանդ օտարների համար, որովհետեւ դու վստահ էիր քո ուժերին: Դու քո բնատուր տաղանդով թէ՛ որպէս երգչուհի եւ թէ՛ որպէս հոյակապ դերասանուհի, լրացնում էիր խաղընկերների եւ նուագախմբի պակասը եւ շատերն էին թողնում սրահը թաց աչքերով:*

*Քո պաշտելի «Անուշ»ը, թէեւ համերգային կատարումով, իրականացաւ Լոս Անճելոսում 1981 Թուականին՝ անժամանակ մահացած դիրիժոր Էդդի Հօշաբեանի ղեկավարութեամբ: Երկրորդ անգամ 1994 Թուականին՝ իմ կազմակերպած եւ ղեկավարած «Թումանեանը երաժշտութեան մէջ» համերգային ծրագրում:*

*Դու եղար մղիչ ուժը, որպէսզի Սարոյի դերը յանձնէի տղայիս՝ Արամին: Մեծ, պատասխանատու յանձնառութիւն վերցրեց տղաս՝ միայն ու միայն յոյսը դնելով քեզ վրայ: Իսկ դու օրեր շարունակ պարապեցիր նրա հետ, բաւարար մակարդակի հասցնելով նրա կատարումը, իսկ յետագայում, քո յուշերի գրքում էլ գրեցիր. «Ինձ համար հաճելի անակնկալ մըն էր առաջին անգամ Սարոյի դերով ներկայացող երիտասարդ Արամ Անասեանի խոստմնալից ելոյթը: Նա իր ձայնը ժառանգել է մօրից՝ գաղութի սիրուած երգչուհի Մարիէթա Անասեանից: Արամի Սարոն բեմից հնչեց մեծ քնարականութեամբ եւ յուզականութեամբ»:*

*Գրեթէ երեսուն տարի առաջ տղադ՝ Ժան Նշանեանը, հարսդ՝ Շաքէ Թուխմանեանը եւ դերասան Յարութիւն Ֆոդուլեանը հիմնեցին «Վարդան Աճէմեան» թատերախումբը, որը տարիների ընթացքում դարձաւ, ինչպէս ինքդ ես ասում քո «երկրորդ ընտանիքը», որի աստիճանների վրայով սկսեց մագլցել թոռդ Արմանը: Բա սրանից էլ աւելի մեծ երջանկութիւն: Դու ամէն ինչ արեցիր թատերախմբի գործունէութիւնը սահուն ընթացքով առաջ տանելու համար: Եւ, իսկապէս էլ, քարքարոտ ճանապարհները վերածելով ողորկ հարթութեան, զաւակներիցդ թատրոնը հասաւ Հայաստան ու ելոյթներ ունեցաւ հայրենի բեմի վրայ, մէկ աւելորդ անգամ ապացուցելով ժողովրդական այն յայտնի ճշմարտութիւնը, թէ՝ «Տաշած քարը գետնին չի մնայ...», ինչը եղաւ նաեւ քո եւ ընտանիքի պարագային:*

*Սիրելի Աննա, ճիշդ է, շատ յաճախ չեղան մեր համատեղ ելոյթները, սկայն ես դեռ էն հին օրերից անցեալ դարի 60-ականներից եմ հրապուրուել քո արուեստով, ի մասնաւորի քո Անուշով, քո փայլուն, հմայիչ ու բուրումնաւէտ արուեստով եւ քո յոբելեանի այս օրերին, թող այս յօդուածը լինի յարգանքի տուրք քո խենթացնող ԱՆՈՒՇԻ առջեւ:*

HayastanInfo.net

## ՍԱՐԳԻՍ ՆԱՃԱՐԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԻ

*Շարունակուած էջ 8-էն*

*Այսօր, ինչպէս մենք հպարտ ենք այդ օրինակով, մեր կարգին կ'աշխատինք ընել այնպէս որ ինքն ալ հպարտ ըլլայ մեզմով:*

*Հազուագիւտ հնարաւորութիւն է իր հօր հանդէպ զգացումներ արտայայտելու առիթը ունենալ հրապարակաւ:*

*Ուրեմն, թոյլ տուէք ինծի այստեղ, այս նոյն Սուրբ Խորանին առջեւ, ուր Սարգիս Նաճարեան ընտրեց պսակուիլ 47 տարիներ առաջ, Նոյն Սբ. Խորանին առջեւ՝ ուր մկրտել եւ ապա պսակել տուաւ իր որդին, նոյն Սբ. Խորանին առջեւ՝ ուր մկրտել տուաւ նաեւ իր անհամբերութեամբ սպասած առաջին թոռնիկը՝ Փաթիլը, այստեղ եւ այսօր, Մեծն Սուրբ Գրիգորի*

*Ասպետի Կարգով Քահանայապետական Շքանշանով պարգեւատրումին օրով, որ կը զուգադիպի նաեւ Սուրբ Սարգիս տօնին, թոյլ տուէք որդիական խոնարհութեամբ յայտնել իմ երախտագիտութիւնս ու սէրս հօրս հանդէպ, եւ իմ եւ ընտանիքին անունով ըսել հօր, ամուսինին, մեծ հօր, եղբօր, հօրեղբօր, մօրեղբօր եւ հարազատին.«Անունովդ ապրիս, նուիրումն ու վարձքդ կատար: Թող մարդկային, հայկական ու քրիստոնէական արժէքներու անսակարկ որդեգրումդ ըլլայ վարակիչ»: Իրենց հօր սրտի խօսքէն ետք, պարգեւատրեալին թոռները՝ Փաթիլ եւ Սարգիս Նաճարեաններ, փոխան ծաղկեփունջի, իրենց մեծ հօր նուիրեցին երաժշտական 3 կատարում, որմէ ետք տեղի ունեցաւ Պահպանիչի կատարում եւ յայտագիրը եզրափակուեցաւ եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցած շնորհաւորանքներու ընդունմամբ եւ կոկիկ հիւրասիրութեամբ:*

## ԻՆՉՈՒ ԱՅԴՊԷՍ ԷԼ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵԱՆՔԸ ՉԻ ԼԱՒԱՆՈՒՄ

*Շարունակուած էջ 6-էն*

*վուրդը մշտապէս իրացնի իր պահանջատէր լինելու իրաւունքը եւ ակտիւօրէն մասնակցի երկրի կառավարման գործընթացներին: Իսկ դրա համար եթէ ոչ այլ կերպ, ապա պէտք է պարտադրեն, որ հանրապետութեան նախագահից՝ մինչեւ գերատեսչութիւնների ղեկավարներ, գոնէ ամիսը մէկ անգամ ժողովրդին հաշուետւութիւն տան իրենց կատարած գործերի, վեր հանուած թերութիւնների եւ նրանց վերացման ուղղութեամբ տարուող աշխատանքների, պիւտճէի միջոցներից կատարուած ծախսերի լուսաբանման, բոլոր ոլորտներում տեղ գտած թերութիւնների, բնակիչներին մերժած գրութիւնների հիմնաւորումների եւ այլ կարեւոր ու առաջնային խնդիրների վերաբերեալ:*

*Այնպէս, որ սիրելի ժողովուրդ, իսկապէս ամէն ինչ քո ձեռքում է եւ պէտք է յոյսդ դնես միայն քեզ վրայ եւ քո հարցերն էլ ինքդ լուծես, այլապէս միշտ կանգնելու ես կոտրած տաշտակի առջեւ:*

*Յուսանք եւ ապրենք...*

## ՈՂԲԱՑԵԱԼ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

*Շարունակուած էջ 16-էն*

*թեամբ:*

*Նաեւ ցուցադրուեցաւ «Վերադարձ Հայաստան» հեռուստատեսիլի ծրագրի տէր մտաւորական Յարութիւն Պրոնոզեանի կողմէ առաջարկուած Հրանդ Տինքի մասին կարճ տեսաժապաւէն մը, որ կ'ընդրկէր մարդկային իրաւունքներուն եւ ցեղասպանութեան մասին, որուն մէջ Հրանդ Տինք կ'արտայայտուէր ըսելով թէ ինչպէս հայը կռիւ ունի իր արմատներուն հետ որ թուրքերը կտրեցին: Թէ մենք պետութիւնը ճնշելու որեւէ բան չունինք, եթէ բան մը պիտի ըլլար ցեղասպանութեան ճանաչման մասին, այդ էական բանը երկրին ժողովրդավարական շարժումին արդիւնքը պիտի ըլլար եւ իւրաքանչիւր հայ որ կ'օգնէ այս շարժումին իրականութեան մէջ օգնած կ'ըլլայ հայ ազատագրման շարժումին: Հրաւիրուեցաւ Երիտասարդաց յանձնախումբի անդամներէն՝ Ալեքս Ակինեանը, որպէսզի Հրանդ Տինքի մահուան եւ մարդկային իրաւունքներուն մասին իր վերլուծումները փոխանցէ: Ան յայտնեց թէ Հրանդ Տինք ի զուր չէ որ մահացաւ: Անոր մահով այն բոլոր խնդիրները որոնց համար ան պայքարեցաւ, տակաւին կան այսօր ինչպէս վեց տարիներ առաջ: «Դիւրին է կորսուիլ այս ողբերգութեան մէջ» ըսաւ Ալեքս, «Ժամանակն է որ դէպի յառաջ երթանք, այդ հին հոգեբանութիւնը որուն մէջ կը տուայտինք բոլորս, պէտք է փոխուի եւ նոր նախադասութիւններ գրելու, միասնաբա՛ր գրելով: Կատարե՛նք միասնաբար, ինչ որ Հրանդ Տինքը ըսաւ մեզի, պաշտպանե՛նք մեր մշակոյթը եւ ժառանգութիւնը եւ վերաշինե՛նք մեր ժողովուրդին գեղեցիկ պատմութիւնը, միշտ յիշելով որ պատահածը վիշտ կամ կորուստ չէ, այլեւ՝ հպարտանք եւ յարատեւութիւն: Այսպէ՛սով է որ կրնանք պատուել Հրանդ Տինքը ցոյց տալով որ իր մահը ի զուր չէր, գովաբանելով զայն մեր միասնականութեան եւ յաջողութեան ընդմէջէն»:*

*Ցուցադրուեցաւ՝ «Մի՛ կորսուիք տղաք» տեսաժապաւէնը Կարապետ Օրունուզի պատրաստութեամբ: Տեսաժապաւէնը կը պատմէր «Արմէն ճամբար»ին մասին, ուր որբեր տեղաւորուած էին եւ ուր եղբայր մը եւ իր քոյրը, որոնք տարբեր ընտանիքներէ եկած որբեր ըլլալով, հոն գտնուած էին: Տասնըհինգ տարիներ վերջ, ուղարկուած նամակով մը կը հասկնան, որ իրենք քոյր եւ եղբայր են եւ նոյն տեղը գիրար կը միանան: Նշենք թէ սոյն ճամբարին մէջ Հրանդ Տինք եւ իր կողակիցը Րաքէլը՝ հասակ առած են, ուր ապա Հրանդ պաշտօն ստանձնած է իբրեւ փոքրերու վերակացու: Սոյն ճամբարը պետութիւնը հայոց ձեռքէն բռնագրաւած էր եւ անվճար ըլլալով տրուած է ուրիշներուն:*

*Ձեռնարկի գիշերը ներկաներուն մէջ գտնուող ազնիւ համակիր մը՝ Տիար Վահէ Յովհաննէսեան, Պոլսահայ Միութեան նուիրեց Հրանդ Տինքի իր գեղանկարած դիմանկարը: Տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:*

# ՑԱՒԱԿՑԱԿԱՆ
# ԵԼԻԶԱՎԵՏԱ ՄԿՐՏԻՉԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ



*ԱՄՆ-ի հայ վետերանների միութեան շարքերը պակասեց եւս մէկ հանրաճանաչ, լեգենդար վետերանով. 89 տարեկան հասակում հիւանդութեան պատճառով կեանքից հեռացաւ երկրորդ համաշխարհային եւ Արցախեան պատերազմների մասնակից, հայկական Թամանեան 89 դիվիզիայի բուժ միաւորման աւագ բուժքոյր Ելիզավետա Կարապետեանը:*

*Ելիզավետա Կարապետեանը ծնուել էր 1923թ. Դեկտեմբերի 20-ին Երեւան քաղաքում. Երեւանի Ջերժինսկու դպրոցն աւարտելուց յետոյ ընդունւում է Երեւանի պետական մանկավարժական ինստիտուտ, բայց աւաղ սկսւում է 2-րդ համաշխարհային պատերազմը. 18-ամեայ Ելիզավետան ծնողներից գաղտնի դիմում է զինկոմիսարիատ եւ մեկնում մարտի դաշտ պաշտպանելու իր հայրենիքը. 1941 Թուականից մինչեւ 1945 Թուականը Գրոզնի քաղաքից մինչեւ Բեռլին մասնակցում է բազմաթիւ մարտական գործողութիւնների, փրկում եւ կրակի գօտուց դուրս բերում հարիւրաւոր վիրաւորների: Խիզախ հայուհին պարգեւատրւում է բազմաթիւ մետալներով ու պատուոգրերով եւ հասնում աւագ լեյտենանտի կոչման. Ետպատերազմեան տարիներին աշխատում է Վարդենիսի մանկատան տնօրէն, մանկավարժ եւ Երեւանի թիւ 45 դպրոցի տնօրէն: Արցախեան պատերազմի տարիներին նրա գլխաւորութեամբ բազմաթիւ անվեհեր կանայք մեկնել են Արցախ եւ մարտական թեժ գօտիներում ու խրամատներում ազատամարտիկներին բաժանել սնունդ, հագուստ, զինամթերք. 2000 Թուականին Ելիզավետան աղջկայ Գայանէյի հրաւէրով տեղափոխւում է Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ շատ շուտով անդամագրւում է Գլենդէյլում գործող հայ վետերանների միութեանը: Շուրջ 13 տարի նա եղել էր եւ կը մնայ մեր յիշողութիւններում որպէս միութեան փոխնախագահ, ազգանուէր, բարեգործ եւ անկրկնելի հայուհի: ԱՄՆ-ի հայ վետերանների միութիւնը յայտնում է իր խորին ցաւակցութիւնը Ելիզավետայի բոլոր հարազատներին, ընկերներին եւ միութեան անդամներին: Փառք քեզ կապիտան Ելիզավետա Կարապետեան Թող հողը թեթեւ լինի վրադ եւ քո անմար յիշատակը միշտ վառ կը մնայ քո մարտական ու աշխատանքային ընկերներիդ, ԱՄՆ-ի հայ վետերանների միութեան բոլոր անդամների սրտերում ու յիշողութեան մէջ: Եւ ինչպէս ասում են Ոչ ոք չի մոռացել, ոչինչ չի մոռացուի.......*

*ԱՄՆ-Ի ՀԱՅ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ*

# ԱՐՄԷՆ ԴԱՐԵԱՆ

*Շարունակուած էջ 15-էն*

*րուն բարձրորակ մակարդակին հետ համատեղ կ'ընթանայ նաեւ անոնց պատկառելի քանակը:*

*Արմէն Դարեան եղաւ «Լիբանանահայ Գրական Շրջանակ»ի խանդավառ հիմնադիրներէն եւ գործունեայ մասնակիցներէն: Գրական Շրջանակը, ի չգոյէ պաշտօնական արտօնագրի, հրատարակած է գրական բազմաթիւ պարբերաթերթեր – «Ժողովածու», «Մշակոյթ», «Գիրք Գրականութեան եւ Արուեստի», «Էջեր Գրականութեան եւ Արուեստի», «Յառաջ Գրական»: Այս բոլոր հրատարակութիւններուն մէջ ներկայ է Արմէն Դարեանը գործնականօրէն ե՛ւ իբրեւ աշխատակից, ե՛ւ, ինչպէս ինք պիտի ըսէր՝ «խոհանոցային աշխատանքներուն» մասնակից: Նոյն դերակատարութիւնը ունեցած է «Մեր Նշանաբանն է Յառաջ», «Կանչ» եւ «Ազգային Մշակոյթ» շաբաթաթերթերու պարագային: Յաճախ աշխատակցած է «Զարթօնք» եւ «Արարատ» թերթերուն, նաեւ, նուազ չափով Սիմոնեանի «Սփիւռք»ին:*

*Յիշատակուած այս բոլոր թերթերուն մէջ, գեղարուեստական արձակէն անկախ, Ալֆոնսը ստորագրած է հարիւրէ աւելի գրախօսական, հարիւրէ աւելի արուեստագէտներու, – բեմի գործիչներ, նկարիչներ եւ մշակոյթի այլ մարզի ներկայացուցիչներ, – արուեստին ու անձերուն նուիրուած յօդուածներ, ազգային բնոյթի գրութիւններ, թատրոնի եւ այլ նիւթերու նուիրուած դասախօսութիւններ, նոյնիսկ լիբանանահայ դպրոցին նուիրուած ուսումնասիրութիւնսերտողութիւն, տակաւին չհրապարակուած նամակներ, որոնք եթէ հաւաքուին ու խմբագրուին, Արմէն Դարեանի վաստակին վրայ նուազագոյնը երեք հաստափոր հատորներ կ'աւելնան:*

*Իր կեանքի վերջին երկու տարիներուն, երբ զգալի նօսրացում արձանագրած էր լիբանանահայ գրողներու եւ մտաւորականներու թիւը, անդարձ մեկնումի կամ ալ արտագաղթի պատճառով, Արմէն Դարեան շարունակեց մնալ իր համոզումներու հաւատարիմ, եւ մատի վրայ համրուող գիտակից եւ սրտակից ընկերներով, 1988 Մայիսէն սկսեալ մաս կազմեց «Շիրակ» ամսագրի խմբագրական կազմին, եւ հակառակ իր բազմազբաղ առօրեային եւ վերջին շրջանի առողջական վիճակին արագընթաց վատթարացումին, իր փորձառու գրիչով ու խմբագրի բացառիկ յատկութիւններով՝ ամսագրին տուաւ նոր բովանդակութիւն ու մակարդակ:*

*Իսկ գրահրատարակչական գործունէութիւնը, զոր Դարեան ծաւալեց լիբանանեան պատերազմի ժամանակ, եղաւ նոյնքան արդիւնաւէտ: Այդ տարիներուն, Արմէնը ստանձնած էր «Թեքնոփրէս» տպարանի հայկական բաժնի պատասխանատուութիւնը: 1984 Թուականին, Սիմոն Սիմոնեան, Արմէն Դարեան, Գրիգոր Համամճեան եւ Սիմոն Քեսթէնեան հիմնեցին «Հայ Տիպ-Քոմփիւկրաֆ» հրատարակչականը, որուն միջոցով լոյսին եկան տասնեակներով գրական, բանասիրական, գեղարուեստական արժէքաւոր գիրքեր, որոնց գրեթէ բոլորին խմբագրութիւնն ու սրբագրութիւնը, ձեւաւորումի ցուցմունքներն ու խնամքով հսկողութիւնը տպագրութեան, շատ բան կը պարտին Դարեանի բծախնդիր ու գեղաճաշակ ներկայութեան: Հրատարակչականին վարիչ-խմբագիրն էր: Կոթողական գործերու նաե՛ւ խմբագիրը եղաւ ինք. յիշեմ վերախմբագրումը եւ վերահսկողութիւնը «Պատմագիրք Եոզկատի եւ Շրջակայից (Գամիրք) Հայոց»ին (մեծադիր 1030 էջ), «Յուշամատեան Նուիրուած Հալէպի Մխիթարեան Վարժարանի Յիսնամեակին» (542 մեծադիր էջ), Գերսամ Ահարոնեանի «Յուշամատեան Մեծ Եղեռնի» հոյակապ հատորին վերահրատարակութիւնը (1132 մեծադիր էջ), որ նախորդին վրայ ունի յաւելումը յատուկ անուններու ցանկերուն, պատրաստուած Լեւոն Վարդանի կողմէ: Տակաւին, այս մարզին մէջ, Դարեանը եղաւ հիմնադիրներէն 1987-ին կազմուած «Հայ Գիրք» ընկերակցութեան, խումբ մը մտաւորականներու հետ – Թորոս Թորանեան, Ժիրայր Դանիէլեան, Յակոբ Աւետիքեան, Վաչէ Ղազարեան եւ Օհան Պողրումեան:*

*Դժբախտաբար, այս մէկն ալ, պատերազամին ու Արմէնի անժամանակ մահով մնաց կիսաւարտ:*

*Սիմոն Սիմոնեանի ծննդեան 75-ամեակին առիթով հրատարակած իր յօդուածին մէջ, Դարեան կը գրէ. «Իր հրատարակութիւններու որակով եւ քանակով, Սիմոն Սիմոնեան, աներկբայօրէն անցած է արդէն հայ մեծ տպագրիչներու անմոռաց հոյլին մէջ, ինչքան որ ալ լիբանանեան պատերազմը այդքան յանկարծական խզած ըլլայ իր հրատարակչական նոր ծրագիրներուն նոր շարքը»:*

*Արդարեւ, Սիմոն Սիմոնեանի «Սեւան» հրատարակչական տունն ու տպարանը, շուրջ քառորդ դարու ընթացքին լոյս ընծայած են 500 անուն գիրք, գրքոյկ եւ դասագիրք: Ի՜նչ լաւ բնորոշած է Արմէն Դարեան իր երէց բարեկամին ու գործընկերոջ հիասքանչ գրահրատարակչական գործունէութիւնը: Յակոբ Մեղապարտով սկսած եւ յաճախ անասելի տառապանքով եւ երկունքով հիւսուած սքանչելի ոսկեշղթային մեզի ժամանակակից փայլուն օղակներէն կազմեց Սիմոնեանի գրահրատարակչական աւելի քան պատկառելի գործունէութիւնը:*

*Համեմատութիւնները պահպանելով, որոշ հեռաւորութենէ մը, նոյնը կարելի է վերագրել Արմէն Դարեանի գրահրատարակչական գործունէութեան, որ եղաւ մանրանկարը Սիմոն Սիմոնեանի կատարած փառաւոր աշխատանքին, եւ Յակոբ Մեղապարտով սկսած ոսկեշղթային՝ նորագոյն մէկ օղակը:*

*Եթէ լիբանանեան պատերազմը «յանկարծական խզած» եղաւ մէկուն գրահրատարակչական ծրագիրներու շարքը, միւսինը՝ Արմէնինը խզուեցաւ անժամանակ, անագորոյն մահուան պատճառով:*

*Երբ Դարեան հրաժեշտ տուաւ կեանքին եւ զինք սիրողներու փաղանգին՝ հազիւ 68 տարու էր:*

*1991-ին, Արմէն Դարեանի մահուան Ա. տարելիցին նուիրուած յօդուածի մը աւարտին գրած էի. «Երանի՜ անոնց, որոնք իրենց մեկնումէն իսկ ետք կը շարունակեն ըլլալ մնայուն ներկայութիւն»:*

*Այսօր, այդ գրութենէն 21 տարի անց, եւ իր ծննդեան 90-ամեակին նուիրուած յիշատակի այս հանդիսութեան առիթով, ասկէ աւելի դիպուկ ու յարմար վերջաբան մը կարելի չէ գտնել, Մեսրոպ Մաշտոցի եւ Յակոբ Մեղապարտի փաղանգին զինուորագրուած, հայ տիպ ու տառի հիասքանչ սպասարկուն՝ ԱՐՄԷՆ ԴԱՐԵԱՆ-ը բնութագրող:*


## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
(818) 246-0125

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

## «ԼԱՐՔ»Ի ՆՈՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ՝ «ՄԻՔԱՏՕ»

*Շարունակուած էջ 7-էն*

*Ոչ մէկ արուեստասէրի ուշադրութենէն վրիպեցաւ Միքատօ կայսրի գահաժառանգ որդի, Նանքի-Փու, թափառական երգիչի յաջող դերով՝ թենոր Ռաֆֆի Քրպապեանի յուզական, այլ գերող ձայնով համակրելի մուտքը թատերաբեմէն ներս: Յայտնութիւն էր Եամ-Եամի դերով Շուշիկ Պարսումեանի նկարագրային պարզունակութեամբ, մշտադրոշմ ժպիտով, նազելաճեմ շարժուձեւերով, հպիչ ձայնով բեմական համարձակ կատարողութիւնը: Նոյնպէս, իր սիրական ձայնով եւ կատակերգական բնոյթով ուշադրութիւն գրաւեց Քոքոյի դերով՝ թենոր Մաթիու Վէլկի: Եւս առաւել՝ գրաւիչ էր Բուհ-Պահի դերով՝ Պաս-պարիդոն Մայքըլ Կալլոբի, Բիշ-Դուշի դերով՝ Մարք Կոլտսթայնի եւ Միքատոյի դերով՝ Ռիչըրտ Շէլտոնի կատարողական արուեստը: Նոյնպէս, Հակառակ իր ստանձնած Քաթիշայ ... ոչ համակրելի դերին՝ Կարինէ Աւագեան արժեցուց իր արուեստը: Իրենց կարգին, Փիթթի-Սինկի դերով՝ Անն Նորիէլ եւ Փիփ-Պոյի դերով՝ Տիան Սաւեր, իրենց ձայնային բարձր արուեստի տպաւորութեան տակ պահեցին ներկայ հանդիսատեսները:*

*Ծայրագոյն Ասիոյ բարքերէն ծնունդ առած Միքատօ Ծայրագոյն Արեւելքէն սեռած համանուն օփերէթը, երաժշտական, քաղաքակրթական, աւանդապահական իմաստով, նաեւ իր ծախսալից դժուարութեամբ՝ բարդ թեմա մը կարելի էր նկատել: Դժուար թէ մարսելի նկատուէր մասնաւորաբար մեր հայ համայնքին կողմէ, որուն նախասիրութիւնները, որոշակի սահմանափակ, ծանօթ են բոլորին, մասնաւորաբար երբ հարցը կը վերաբերէր ներկայ օփերէթին, ուր կը բացակայէր իր ազգային ինքնութիւնը, իր առօրեայ կեանքը, իրեն հասկնալի, գինք գուարճացնող կատակերգութիւնը: Այդ վարկածները, վստահ, հաշուի առնուած ըլլալով հանդերձ՝ կշիռքը թեքած էր դէպի միջազգային չափանիշով բարձրորակ արուեստի արժեւորման հրամայականը, որ կրնար ոչ միայն աւիթ ընծայել ծանօթանալու օտարին գեղարուեստին, նաեւ բարձրացնել մարդու գեղարուեստական ճաշակը: Լարքի տնօրէն վաստակաշատ խմբավարին՝ Վաչէ Պարսումեանին համար, հայ ու օտար ազգի երաժշտական բարձրորակ ստեղծագործութիւնները իրարու ծանօթացնելը դարձած էր նաեւ իր երաժշտական կոչումին մէկ անբաժան մասը, հաւատոյ հանգանակը:*

*Միքատօ օփերէթը, որպէս արուեստի օփերէթիք գոհար, լաւագոյնս գնահատուեցաւ գեղարուեստասէր հայ հասարակութեան կողմէ, որ երկու յաջորդական օրեր, Յունուարի 18 եւ 19 թուակիր երեկոյթներուն, մեծատարած հանդիսասրահով մէկ, բարձրօրէն գնահատեց ելոյթը եւ ջերմօրէն ողջունեց բեմադրիչ Ռիչըրտ Շէլտոնն ու խմբավար Վաչէ Պարսումեանը:*





## ՀԲԸ ՄԻՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏ 2013 ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

*Շարունակուած էջ 7-էն*

*գիրներուն»:*

*Ժամանակակից Հայկական Արուեստ 2013-ի մասնակցող արուեստագէտներն են.- Ռուբէն Գրիգորեան, Հերմինէ Դեմիրճեան-Տէմիրօ, Ֆելիքս Եղիազարեան, Տիգրան Էքիզեան, Սուրէն Խորէնեան, Փոթըր Կարապետեան, Մանուէլլա Կիրակոսեան, Սարգիս Համալբաշեան, Գագիկ Ղազանճեան, Տիգրան Մատուլեան, Մարատ Մարգարեան, Կառլոս Սայադեան, Լիլիթ Սողոմոնեան եւ Կայծ Վանիկեան:*

*Յաջորդ հաղորդագրութեամբ պիտի անդրադառնանք արուեստագէտներու կեանքին եւ գործին:*







